2021

# ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԱԽԱԲԱՆ.......................................................................................................- 3 -

1. *2021 թվականի փարեկան գործունեության ծրագրի կապարման ընթացքի վերաբերյալ տեղեկապվություն..............................................................................................- 5 -*
2. *2021 թվականի վերահսկողական աշխատանքների ամփոփ ցուցանիշները՝ 2019-2020թթ. համեմատությամբ...........................................................................- 6 -*
3. *Ստուգումներ և դիտարկումներ, քանակը, բնութագրերը, հիմքերը, տեվողությունը և արդյունքները.....................................................................................................- 15 -*
4. *Տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կապարվող օրենսդրության խախտումները կամ շեղումները, որոնք վերհանել են տեսչական մարմինները, ինչպես նաև դրանց պատճառները և տարածվածությունը............................................- 19 -*
5. *Վերահսկողության ոլորտում ռիսկերի առկա իրավիճակի վերլուծությունը...........- 20 -*
6. *Խորհրդատվական գործունեությունը, տնտեսավարող սուբյեկտների կողմից հաճախ տրվող հարցերի վերհանումը և այն իրավական ակտերը, որոնք տալիս են դրանց հստակ պատասխանները..........................................................................- 29 -*
7. *Կանխարգելիչ գործողությունները և այն ռիսկերը, որոնց վերհանմանն են ուղղված, և որոնք կանխել են դրանք.......................................................................- 32 -*
8. *2021 թվականի ընթացքում Տեսչական մարմնի և միջազգային կազմակերպությունների միջև համագործակցություն....................................................................- 34 -*
9. *Օրենսդրության մեջ փոփոխությունների կապարման առաջարկները՝ օրենսդրական բացերը լրացնելու, ստուգումների արդյունավետությունը բարձրացնելու և տնտեսավարող սուբյեկտների համար վարչական և վերահսկողական բեռը նվազեցնելու նպատակով..................................................................... - 36 -*
10. *Տեսչական մարմնի կարիքների հզորացում......................................... - 38 -*
11. *Կադրային կարողությունների զարգացում..............................................*- 41 -
12. *Տեսչական մարմնի և դրա պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ վարչական ակտի դեմ, բերված բողոքների քանակը, բովանդակությունը և դրանց վերաբերյալ ընդունված որոշումների մասին...........................................*- 43 -

# ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) 2021 թվականի գործունեության տարեկան հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) կազմման համար հիմք են հանդիսացել «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N733-Լ որոշմամբ հաստատված Տեսչական մարմնի կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

Տեսչական մարմինն իր նպատակն ու խնդիրներն իրականացնելու համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթներ, այդ թվում՝ կիրառում պատասխանատվության միջոցներ բնապահպանության ու ընդերքի ոլորտներում, ձեռնարկում միջոցներ վերահսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ: Ուղղություններն են՝

- մթնոլորտային օդի պահպանություն
- ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն
- հողերի օգտագործում և պահպանություն
- ընդերքօգտագործում և ընդերքի պահպանություն
- կենդանական և բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն
- վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ
- պետական փորձաքննություն
- բնապահպանական հարկ և բնօգտագործման վճարներ
- վիճակագրական հաշվետվություններ

Տեսչական մարմնի նպատակն է օրենքով սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում անվտանգության և օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը:

Տեսչական մարմնի խնդիրներն են՝

- բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի կառավարումը և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ

վերահսկողության իրականացումը, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպումը.

- շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելիչ կամ նվազեցման միջոցառումների իրականացումը:

ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 706-Ա որոշմամբ Տեսչական մարմնի համար սահմանվել է թվով 195 հաստիք, որից ներկայումս 28-ը՝ թափուր:

Տեսչական մարմնի լիազորությունների իրականացման նպատակով 2021 թվականի կտրվածքով իրականացվել է 881,040,300 ՀՀ դրամի բյուջետային հատկացում՝ կատարողականը կազմում է 97,2%: Նախորդ երկու տարիների կտրվածքով ՀՀ պետական բյուջեի հատկացումները ներկայացված են ստորև:

2020 թվականի կատարողականը կազմում է 92,4%, 2019 թվականի կատարողականը կազմում է 89,1%:

| ֆինանսավորման ծավալը | 2019 թ. ՀՀ պետական բյուջե /հազ. ՀՀ դրամ/ | 2020թ. ՀՀ պետական բյուջե /հազ. ՀՀ դրամ/ | 2021թ. ՀՀ պետական բյուջե /հազ. ՀՀ դրամ/ | 2022թ. բյուջետային հայտ /հազ. ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|---|
| **Ընդամենը՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին, այդ թվում՝** | **906,078.6** | **870,213.4** | **881,040.3** | **933,932.6** |
| **Ընթացիկ** | **874,510.8** | **860,508.6** | **872,610.3** | **930,932.6** |
| **Կապիտալ** | **31,567.8** | **3,704.8** | **8,430.0** | **3,000.0** |

# 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Տեսչական մարմինը 2021 թվականի գործունեությունն իրականացրել է՝ առաջնորդվելով Տեսչական մարմնի կառավարման խորհրդի կողմից 2020 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 10-Լ և 11-Լ որոշումներով հաստատված 2021 թվականի ստուգումների և տարեկան գործունեության ծրագրերով:

2021 թվականի թվով 18 միջոցառումից չի իրականացվել 8-ը՝

1) ընդերքօգտագործման ոլորտի թվով 21 ստուգում՝ պայմանավորված ոլորտային մասնագետների զբաղվածությամբ, սակայն նույն ոլորտով իրականացվել է թվով 45 արտածրագրային ստուգում,
2) էլեկտրոնային վերահսկողության համակարգի ստեղծում և սարքավորումների ձեռք բերում՝ պայմանավորված գումարի բացակայությամբ,
3) թվով 6 նորմատիվ իրավական ակտի փոփոխություններ, սակայն 2021 թվականին կազմակերպվել և անցկացվել են դրանց վերաբերյալ քննարկումներ՝ տարբեր շահագրգիռ պետական կառույցների հետ:

Իրավախախտումների հարաբերական թիվը վերահսկողական միջոցառումների քանակի հետ համեմատած 2-5% չի նվազել՝ պայմանավորված հետպատերազմյան իրավիճակում սոցիալական վիճակի սրացմամբ:

Համաձայն 2021 տարեկան գործունեության ծրագրի նպատակների՝ Տեսչական մարմինն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացրել է բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի կառավարում և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն, ինչպես նաև իրականացված վերահսկողության շրջանակներում կանխարգելիչ միջոցառումների կազմակերպում, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների, բնական ռեսուրսների ոչ բանական օգտագործման կանխարգելման կամ նվազեցման համար:

2021 թվականին թիրախավորվել է տնտեսական գործունեության հետևյալ ոլորտները՝

- ✓ մետաղական հանքավայրերի շահագործում
- ✓ անտառային տնտեսություններ և հատուկ պահպանվող տարածքներ
- ✓ ոչ մետաղական հանքավայրերի և հանքային ջրերի շահագործում
- ✓ մետաղական և քիմիական արտադրատեսակների արտադրություն
- ✓ էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայաններում
- ✓ ձկնաբուծություն
- ✓ ջրամատակարարում
- ✓ թափոնների տեղադրում և ոչնչացում
- ✓ այլ արտադրական գործունեություն

Վերոնշյալ նպատակների իրագործման առնչությամբ իրականացվել են վերահսկողական գործառույթներ (ստուգումներ, դիտարկումներ, վարչական վարույթներ և ուսումնասիրություններ), ինչպես նաև կանխարգելիչ, իրազեկման և խորհրդատվական միջոցառումներ:



## 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ՝ 2019-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով բնապահպանության և ընդերքի ոլորտներում իրականացված վերահսկողական և (կամ) օրենքով սահմանված այլ գործառույթների արդյունքում արձանագրվել է ընդհանուր թվով 2083 իրավախախտման դեպք, որը 2020 թվականի համեմատությամբ աճել է 30%, իսկ 2019 թվականի համեմատությամբ՝ 11,8%:

Վերահսկողության ոլորտներում նախորդ երկու տարվա իրավախախտումների դեպքերի համեմատականով արձանագրվել են առավել բարձր ռիսկային ուղղություններ, որոնց քանակական և տոկոսային արտահայտումը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

*Աղյուսակ 1*

| Հայտնաբերված իրավախախտումների թվի համեմատականը՝ ըստ վերահսկողական ուղղությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| h/h | ***Ուղղությունները*** | ***2019 թվական*** | ***2019 թվական %*** | ***2020 թվական*** | ***2020 թվական %*** | ***2021 թվական*** | ***2021 թվական %*** |
| 1 | **Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն** | **1121** | **60.2** | **968** | **60.3** | **1068** | **51.3** |
| 2 | **Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն** | **225** | **12.1** | **133** | **8.3** | **95** | **4.6** |
| 3 | **Մթնոլորտային օդի պահպանություն** | **54** | **2.9** | **42** | **2.6** | **143** | **6.9** |
| 4 | **Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն** | **98** | **5.3** | **93** | **5.8** | **114** | **5.5** |
| 5 | **Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ** | **9** | **0.5** | **17** | **1.1** | **71** | **3.4** |
| 6 | **Հողերի օգտագործում և պահպանություն** | **57** | **3.1** | **44** | **2.7** | **120** | **5.8** |
| 7 | **Ընդերքօգտագործում և պահպանություն** | **21** | **1.1** | **13** | **0.8** | **84** | **4.0** |
| 8 | **Վիճակագրական հաշվետվություններ** | **268** | **14.4** | **284** | **17.7** | **338** | **16.2** |
| 9 | **Պետական փորձաքննություն (ՇՄԱԳ)** | **10** | **0.5** | **11** | **0.7** | **50** | **2.4** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **1863** | **100** | **1605** | **100** | **2083** | **100** |

Վերահսկողական աշխատանքների արդյունքում արձանագրված իրավախախտումների հիմքով հարուցվել է 1025 վարչական վարույթ, որից 178-ը միայն ստուգումներով: Վարչական վարույթները հարուցվել են Տեսչական մարմնի նախաձեռնությամբ, ՀՀ վարչապետի հանձնարարականների, ՀՀ իրավապահ և պետական այլ մարմիններից ստացված գրությունների, քաղաքացիների դիմում-բողոքների, ահազանգերի և այլ հիմքերով: Տեսչական մարմնի կողմից վարչական վարույթների հարուցման հիմքերը նախորդ երկու տարվա համեմատականով ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Համաձայն այդ տվյալների 2021 թվականին հարուցված վարչական վարույթների թիվը 2020 թվականի համեմատությամբ աճել է 6,3%, իսկ 2019 թվականի համեմատությամբ նվազել՝ 19,8%:

*Աղյուսակ 2*

| Տեսչական մարմնի կողմից հարուցված վարչական վարույթներ՝ ըստ 2019-2020 թվականների համեմատականի | | | | |
|---|---|---|---|---|
| հ/հ | ***Վերահսկողության հիմքը*** | ***2019 թվական*** | ***2020 թվական*** | ***2021 թվական*** |
| 1 | Տեսչական մարմնի նախաձեռնությամբ | 576 | 479 | 480 |
| 2 | Ոստիկանություն | 279 | 244 | 223 |
| 3 | Դատախազություն | 5 | 9 | 8 |
| 4 | ՊԵԿ | 22 | 40 | 82 |
| 5 | ԱԱԾ | 1 | 4 | 2 |
| 6 | Քննչական կոմիտե | 39 | 48 | 31 |
| 7 | Տեղական ինքնակառավարման մարմիններ | 38 | 7 | 6 |
| 8 | Դիմում/բողոք | 49 | 16 | 23 |
| 9 | Հասարակական կազմակերպություն | 2 | 1 | 3 |
| 10 | Նախարարություններ | 102 | 58 | 83 |
| 11 | «Հայանտառ» ՊՈԱԿ | 53 | 46 | 38 |
| 12 | Վարչապետի աշխատակազմ | 36 | 7 | 39 |
| 13 | Էլեկտրոնային հաղորդագրություն | 20 | 4 | 6 |
| 14 | ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր | 3 | 1 | 0 |
| 15 | Թեժ գիծ, ահազանգ | 2 | 0 | 1 |
| 16 | Զանգվածային լրատվական միջոց | 1 | 0 | 0 |
| **Ընդամենը** | | **1,228** | **964** | **1,025** |

Հարուցված վարչական վարույթների արդյունքում վարչական տույժի են ենթարկվել 916 անձ, որոնց նկատմամբ կիրառվել է թվով 1,144 վարչական տույժ: Նախորդ երկու տարվա համեմատականը կիրառված տույժերի քանակի և վերահսկողական ուղղությունների առնչությամբ ներկայացված է Աղյուսակ 3-ում:

Համաձայն այդ տվյալների 2021 թվականին կիրառված վարչական տույժերի թիվը 2020 թվականի համեմատությամբ աճել է 43%, իսկ 2019 թվականի համեմատությամբ՝ 25,2%:

*Աղյուսակ 3*

| Տեսչական մարմնի կողմից կիրառված վարչական տույժերի քանակն՝ ըստ վերահսկողական ուղղությունների | | | | |
|---|---|---|---|---|
| Հ/Հ | *Ուղղությունները* | *2019 թվական* | *2020 թվական* | *2021 թվական* |
| 1 | Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն | 427 | 324 | 272 |
| 2 | Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն | 37 | 36 | 45 |
| 3 | Մթնոլորտային օդի պահպանություն | 48 | 37 | 137 |
| 4 | Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն | 85 | 87 | 111 |
| 5 | Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ | 7 | 16 | 67 |
| 6 | Հողերի օգտագործում և պահպանություն | 29 | 21 | 66 |
| 7 | Ընդերքօգտագործում և պահպանություն | 16 | 12 | 75 |
| 8 | Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում | 255 | 254 | 324 |
| 9 | Պետական փորձաքննություն (ՇՄԱԳ) | 10 | 13 | 47 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **914** | **800** | **1,144** |

Հարուցված վարչական վարույթների արդյունքում նշանակված վարչական տուգանքի չափը կազմել է 103,490,000 ՀՀ դրամ: Նախորդ երկու տարվա համեմատականը ըստ առավել ռիսկային ուղղությունների ներկայացված է Աղյուսակ 4-ում:

Համաձայն այդ տվյալների 2021 թվականի ընթացքում նշանակված տուգանքի չափը 2020 թվականի համեմատությամբ աճել է 36,6%, իսկ 2019 թվականի համեմատությամբ՝ 17,4%:

*Աղյուսակ 4*

| Տեսչական մարմնի կողմից կիրառված վարչական տուգանքի գումարի չափը՝ ըստ վերահսկողական ուղղությունների *ՀՀ դրամ* | | | | |
|---|---|---|---|---|
| հ/հ | ***Ուղղությունները*** | ***2019 թվական*** | ***2020 թվական*** | ***2021 թվական*** |
| 1 | **Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն** | 41,330,000 | 33,836,000 | 28,780,000 |
| 2 | **Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն** | 3,170,000 | 2,300,000 | 4,100,000 |
| 3 | **Մթնոլորտային օդի պահպանություն** | 3,850,000 | 2,750,000 | 11,630,000 |
| 4 | **Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն** | 18,350,000 | 16,210,000 | 20,220,000 |
| 5 | **Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ** | 530,000 | 1,170,000 | 3,220,000 |
| 6 | **Հողերի օգտագործում և պահպանություն** | 2,310,000 | 1,330,000 | 4,860,000 |
| 7 | **Ընդերքօգտագործում և պահպանություն** | 1,150,000 | 1,350,000 | 7,070,000 |
| 8 | **Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացում** | 16,620,000 | 15,690,000 | 19,810,000 |
| 9 | **Պետական փորձաքննություն** | 850,000 | 1,100,000 | 3,800,000 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **88,160,000** | **75,736,000** | **103,490,000** |

Վերահսկողական աշխատանքների արդյունքում Տեսչական մարմնի կողմից իրականացվել է 1266 վնասի հաշվարկ և հաշվարկվել է շրջակա միջավայրին հասցված 1,971,066,892 ՀՀ դրամ գումարի չափով վնաս: Նախորդ երկու տարվա համեմատականը ըստ առավել ռիսկային ուղղությունների ներկայացված է Աղյուսակ 5-ում:

Համաձայն այդ տվյալների 2021 թվականի ընթացքում հաշվարկված վնասի չափը 2020 թվականի համեմատությամբ աճել է 26.7%, իսկ 2019 թվականի համեմատությամբ նվազել՝ 34.7%:

*Աղյուսակ 5*

| Տեսչական մարմնի կողմից հաշվարկված շրջակա միջավայրին հասցված վնասի չափը՝ ըստ վերահսկողական ուղղությունների | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | *ՀՀ դրամ* |
| հ/հ | **Ուղղությունները** | **2019 թվական** | **2020 թվական** | **2021 թվական** |
| 1 | **Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն** | 1,451,276,420 | 814,714,436 | 1,004,640,274 |
| 2 | **Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն** | 19,176,384 | 641,856,340 | 11,705,590 |
| 3 | **Մթնոլորտային օդի պահպանություն** | 414,407,196 | 25,227,496 | 48,678,079 |
| 4 | **Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն** | 659,987,776 | 32,962,318 | 632,870,525 |
| 5 | **Հողերի օգտագործում և պահպանություն** | 109,929,299 | 40,554,156 | 213,172,424 |
| 5 | **Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ** | 0 | 0 | 60,000,000 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **2,654,777,075** | **1,555,314,746** | **1,971,066,892** |

## *Տեսչական մարմին և ՀՀ իրավապահ մարմիններ համագործակցություն*

Վերահսկողական աշխատանքների արդյունքում Տեսչական մարմնի կողմից իրավապահ մարմիններին ուղարկվել է 883 նյութ՝ 1,263,684,788 ՀՀ դրամ շրջակա միջավայրին հասցված վնասի հաշվարկով: Նախորդ երկու տարվա համեմատականը ներկայացված է Աղյուսակ 6-ում:

Համաձայն այդ տվյալների 2021 թվականի ընթացքում իրավապահ մարմիններին ուղարկված նյութերի քանակը 2020 թվականի համեմատությամբ աճել է 16.3%, իսկ 2019 թվականի համեմատությամբ՝ 7.1%:

*Աղյուսակ 6*

| հ/հ | ***Ժամանակահատվածը*** | ***Իրավապահ մարմիններին ուղարկված*** | |
|---|---|---|---|
| | | ***Նյութերի քանակը*** | ***Շրջակա միջավայրին հասցված վնասի չափը (ՀՀ դրամ)*** |
| *1* | *2* | *3* | *4* |
| 1 | ***2019 թվական*** | 820 | 1,485,809,280 |
| 2 | ***2020 թվական*** | 759 | 1,245,344,728 |
| 3 | ***2021 թվական*** | 883 | 1,263,684,788 |

Հարկ է նշել, որ 2021 թվականի ընթացքում ՀՀ իրավապահներին ուղարկված նյութերից թվով 789-ը միայն ապօրինի ծառահատման և փայտանյութի ձեռքբերման վերաբերյալ դեպքերն են՝ շրջակա միջավայրին հասցված 965,729,755 ՀՀ դրամ վնասի ի չափով:

Տեսչական մարմնի և իրավապահ մարմինների համատեղ աշխատանքների արդյունքում բուսական աշխարհի պահպանության ոլորտում իրականացված վերահսկողական աշխատանքների շրջանակներում 2021 թվականի ընթացքում հայտնաբերվել և արձանագրվել է 19,475 հատ ապօրինի հատված ծառ և 2,567 խմ փայտանյութի ձեռքբերում:

Աղյուսակ 7-ում ներկայացված են 2017-2021 թվականների կտրվածքով Տեսչական մարմնի և իրավապահ մարմինների համատեղ աշխատանքների արդյունքում հայտնաբերված ապօրինի ծառահատումների թիվը և ձեռքբերված փայտանյութի ծավալը, տուգանված անձանց թիվը, նշանակված տուգանքի գումարի չափը և բնությանը պատճառված վնասի չափը:

Տեսչական մարմնի և իրավապահ մարմինների համատեղ աշխատանքների արդյունքում կենդանական աշխարհի պահպանության ոլորտում արձանագրվել են Կարմիր գրքում գրանցված 2 բեզոարյան այծի և 1 կովկասյան գորշ արջի, 6 կաքավի, 25 լորի, 9 երգեցիկ թռչնի, 5 սև փարփարի, 49 տափաստանային արտույտի, 8 թխակապույտ

աղավնու, 1 ջրցուլի, 1 սուզակի, 1 այծյամի և 7 նապաստակի ապօրինի որսի դեպքեր: Առգրավվել է 26 հատ հրացան, 38 հատ փամփուշտ, 1 փամփշտակալ և 1 լոր կանչելու արգելված էլեկտրական սարք:

*Աղյուսակ 7*

| Ապօրինի ծառահատումների և ձեռքբերված փայտանյութի տեղափոխում | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *Ժամանակահատվածը* | *Հատված ծառերի քանակը /հատ/* | *Ձեռքբերված փայտանյութի ծավալը /խմ/* | *Տուգանված անձանց թվաքանակը* | *Վարչական տուգանքի չափը (ՀՀ դրամ)* | *Բնությանը պատճառված վնասի գումարի չափը (ՀՀ դրամ)* |
| ***2017 թվական*** | 30,720 | 692 | 415 | 32,361,000 | 3,394,446,400 |
| ***2018 թվական*** | 12,821 | 892 | 504 | 44,340,000 | 1,071,368,140 |
| ***2019 թվական*** | 16,818 | 3,186 | 427 | 41,330,000 | 1,451,276,420 |
| ***2020 թվական*** | 12,978 | 1,647 | 324 | 33,836,000 | 814,714,440 |
| ***2021 թվական*** | 19,475 | 2,567 | 272 | 28,780,000 | 1,004,640,274 |
| **Ընդամենը** | **92,812** | **8,984** | **1,942** | **180,647,000** | **7,736,445,674** |

Տեսչական մարմնի և իրավապահ մարմինների համատեղ աշխատանքների արդյունքում առգրավվել է 655,2 կգ սիգ, 143 հատ կարմրախայտ, 22,5 կգ տարբեր տեսակի ձկներ, 164 ձկնագողության ցանց և 52 խեցգետնորսիչ:

Կարևոր է նշել, որ ՀՀ վարչապետի հանձնարարականների և Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության գրությունների հիման վրա Արաքս գետի ավազանում շուրջ 40 կմ երկայնքով ՀՀ Արմավիրի և Արարատի մարզերի Շահումյան–Գետաշեն համայնքների հատվածում՝ օգտակար հանածոյի արդյունահանման իրավունք ունեցող ընկերությունների թվով 23 տեղամասերին հարակից տարածքներում իրականացվել են չափագրման աշխատանքներ:

Արձանագրվել են ՀՀ կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում Արաքս գետից գետավազի արդյունահանման կարգը հաստատելու մասին» թիվ 18-Ն որոշման կետերի պահանջների խախտումներ, որի

արդյունքում թվով 15 առերևույթ արձանագրված իրավախախտումների մասով նյութերը ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն՝ օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը ապահովելու համար: Հողային ռեսուրսներին պատճառված վնասի չափը հաշվարկվել է 9,974,739 ՀՀ դրամ:

ՀՀ իրավապահ մարմինների կողմից ստացված գրությունների հիմքով իրականացվել են նաև թվով 16 մարկշեյդերական չափագրման աշխատանքներ, որոնց արդյունքում տրամադրվել են մակերեսների և ծավալների հաշվարկներ:

### ***Վերահսկողության արդյունքում ՀՀ պետական բյուջեի մուտքեր***

- 2021 թվականի ընթացքում մուտքագրվել է 125,698,722 ՀՀ դրամ
- 2020 թվականին ընթացքում մուտքագրվել է 97,376,573.90 ՀՀ դրամ
- 2019 թվականին ընթացքում մուտքագրվել է 512,349,241 ՀՀ դրամ:

Գանձումների գործընթացն օրենքով սահմանված կարգով շարունակվում է:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն է ուղարկվել 400 որոշում 103,881,704 ՀՀ դրամի բռնագանձման պահանջով: Արդյունքում բռնագանձվել է 23,538,411 ՀՀ դրամ:

## ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ, ՔԱՆԱԿԸ, ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ, ՀԻՄՔԵՐԸ, ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2021 թվականին ստուգումներն իրականացվել են Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 10-Լ որոշմամբ հաստատված ստուգումների տարեկան ծրագրով, ՀՀ վարչապետի հանձնարարականներով, ՀՀ իրավապահ և պետական այլ մարմիններից, տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից ստացված գրությունների, քաղաքացիների դիմում-բողոքների հիմքերով:

Տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված թվով 257 հանձնարարագրով (թվով 33-ը 2020 թվականից տեղափոխված, որից 21-ը ուժը կորցրած է ճանաչվել՝ պայմանավորված երկրում հայտարարված արտակարգ և ռազմական դրությամբ) իրականացված վերահսկողական աշխատանքների արդյունքներն ընդհանուր առմամբ ունեն հետևյալ պատկերը.

Հաշվետու տարվա կտրվածքով իրականացվել է թվով 236 ստուգում, արդյունքում թվով 213 ստուգում ավարտվել է, 16-ը տեղափոխվել է 2022 թվական, իսկ 7 հանձնարարագիր ուժը կորցրած է ճանաչվել:

- Ընդհանուր ստուգումների մեջ արտածրագրային ստուգումների քանակը 157-ն է, որը կազմում է ստուգումների ընդհանուր թվի 66,5%-ը, իսկ տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների քանակը 79-ն է, որը կազմում է ստուգումների ընդհանուր թվի 33,5%-ը:
- 2021 թվականին Տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրվել է թվով 224 հանձնարարագիր (79 հանձնարարագիր 2021 թվականի տարեկան ծրագրով, 145-ը արտածրագրային), որից փաստացի ավարտվել է 201-ը (կատարողականը՝ 89,7%),
- 2020 թվականից տեղափոխված թվով 12 հանձնարարագրով ստուգում ավարտվել է:

***Ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների քանակը (բացարձակ և տոկոսային արժեքներով).***

- 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված թվով 100 ստուգումից 71-ն ավարտվել է (կատարողականը՝ 71%), 7-ը տեղափոխվել է 2022

թվական, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել, 21 հանձնարարագիր (ընդերքօգտագործման ոլորտով) չի բացվել, քանի որ սույն ոլորտով իրականացվել են թվով 45 արտածրագրային ստուգումներ՝ ՀՀ վարչապետի հանձնարարականով, լիազոր մարմինների գրությունների և իրավապահ մարմիններից ստացված որոշումների հիմքերով:

***Տեսչական մարմնի ղեկավարի կողմից ընդհանուր առմամբ փրվել է.***

- 2021 թվականին թվով 224 ստուգում իրականացնելու մասին հանձնարարագիր
- 2020 թվականին թվով 152 ստուգում իրականացնելու մասին հանձնարարագիր
- 2019 թվականին թվով 160 ստուգում իրականացնելու մասին հանձնարարագիր

2020 թվականի համեմատությամբ աճել է 47,5%, իսկ 2019 թվականի համեմատությամբ՝ 40%:

***Թվով 257 հանձնարարագրերի հրապարակման հիմքերը.***

- 2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրով - 79 ստուգում, որից 71-ը ավարտվել է, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել, 7-ը տեղափոխվել է 2022թ,
- ՀՀ վարչապետի հանձնարարականով - 29 ստուգում, որից 27-ը ավարտվել է, 2-ը ուժը կորցրած է ճանաչվել,
- Տեսչական մարմինների համակարգման գրասենյակից ստացված գրություններով - 21 ստուգում, որից 17-ը ավարտվել է, 4-ը ուժը կորցրած է ճանաչվել,
- Իրավապահ մարմիններց ստացված գրություններով - 15 ստուգում, որից 10-ը ավարտվել է, 2-ը ուժը կորցրած է ճանաչվել, 3-ը տեղափոխվել է 2022թ,
- ՀՀ նախարարարությունների գրություններով - 47 ստուգում, որից 44-ը ավարտվել է, 2-ը ուժը կորցրած է ճանաչվել, 1-ը տեղափոխվել է 2022թ,
- Պետական եկամուտների կոմիտեից ստացված գրություններով - 3 ստուգում, որից 1-ը ավարտվել է, 2-ը տեղափոխվել է 2022թ,
- քաղաքացիներից ստացված բողոք-դիմումներով - 16 ստուգում, որից 12-ը ավարտվել է, 3-ը ուժը կորցրած է ճանաչվել, 1-ը տեղափոխվել է 2022թ,
- Տեղական ինքնակառավարման մարմիններից ստացված գրություններով - 5 ստուգում, որից 4-ը ավարտվել է, 1-ը տեղափոխվել է 2022թ,

- Տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքում տնտեսավարողներին տրված խախտումները վերացնելու մասին հանձնարարականների կատարման հիմքով - 19 ստուգում, որից 18-ը ավարտվել է, 1-ը տեղափոխվել է 2022թ,
- հասարակական կազմակերպություններից ստացված գրություններով - 2 ստուգում, որից 1-ը ավարտվել է, 1-ը ուժը կորցրած է ճանաչվել,
- տնտեսավարողի կողմից հաշվետվություն չներկայացնելու հիմքով – 4 ստուգում, որից 4 -ն էլ ավարտվել է:
- 2020 թվականից տեղափոխման հիմքով - 17 ստուգում, որից 4-ը ավարտվել է, 13-ը ուժը կորցրած է ճանաչվել:

***Ստուգման արդյունքները***

- 2021 թվականի ընթացքում 213 ավարտված ստուգումների ամփոփման արդյունքում կազմվել է 195 ստուգման ակտ և 18 խախտումներ չհայտնաբերելու վերաբերյալ տեղեկանք:
- Կայացվել է թվով 232 վարչական տույժի մասին որոշում, նշանակվել է 42,890,000 ՀՀ դրամի գումարի չափով վարչական տուգանք,
- թվով 77 ստուգման արդյունքներով հաշվարկվել է շրջակա միջավայրին հասցված 887,185,120 ՀՀ դրամ գումարի չափով վնաս,
- ստուգումների արդյունքներով տնտեսավարողներին տրվել են հայտնաբերված թերությունների և խախտումների վերացման վերաբերյալ թվով 120 հանձնարարականներ, որոնցից 70–ը լիովին կատարվել է, 13-ը՝ մասնակի, մյուսներն ընթացքի մեջ են:

2021 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների միջին տևողությունը կազմում է 10 օր, ըստ անհրաժեշտության իրականացված ստուգումների միջին տևողությունը՝ 6 օր, իսկ մեկ ստուգմանը մասնակցած աշխատողների քանակը՝ միջինում 3:

## ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ, ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրվել է դիտարկում իրականացնելու մասին թվով 30 հրաման, ըստ հետևյալ ուղղությունների՝

- 12-ը՝ մթնոլորտային օդի պահպանություն
- 1-ը՝ ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն
- 5-ը՝ թափոնների տեղադրում և ոչնչացում
- 2-ը՝ կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն
- 1-ը՝ բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն
- 2-ը՝ ընդերքօգտագործում
- 7-ը՝ պետական փորձաքննություն (ՇՄԱԳ)

Արդյունքում արձանագրվել է թվով 20 իրավախախտում (Աղյուսակ 8), կայացվել է հայտնաբերված խախտումները վերացնելու մասին թվով 12 նախազգուշացում նշանակելու մասին որոշում, տնտեսավարողի գործողությունը կասեցնելու մասին 1 որոշում, և կիրառվել թվով 16 նախազգուշացում՝ ըստ հետևյալ ուղղությունների:

*Աղյուսակ 8*

| Դիտարկումներով հայտնաբերված իրավախախտումները՝ ըստ վերահսկողական ուղղությունների | | | |
|---|---|---|---|
| հ/հ | **Ուղղությունները** | **2021 թվական** | **2021 թվական %** |
| 1 | **Բուսական աշխարհի օգտագործում և պահպանություն** | **1** | **5** |
| 2 | **Կենդանական աշխարհի օգտագործում և պահպանություն** | **1** | **5** |
| 3 | **Մթնոլորտային օդի պահպանություն** | **2** | **10** |
| 4 | **Ջրային ռեսուրսների օգտագործում և պահպանություն** | **1** | **5** |
| 5 | **Վտանգավոր նյութեր, արտադրության ու սպառման թափոններ** | **6** | **30** |
| 6 | **Հողերի օգտագործում և պահպանություն** | **4** | **20** |
| 7 | **Ընդերքօգտագործում և պահպանություն** | **1** | **5** |
| 8 | **Պետական փորձաքննություն (ՇՄԱԳ)** | **4** | **20** |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **20** | **100** |

## ՏՆՏԵՍՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՎԵԼ ՀԱՃԱԽ ԿԱՏԱՐՎԱԾ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԿԱՄ ՇԵՂՈՒՄՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացված ստուգումների արդյունքում վերհանվել են տնտեսավարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական խախտումները, որոնք ներկայացված են Աղյուսակ 9-ում:

- ՀՀ «Ջրային օրենսգրքի» 21-րդ, 27-րդ հոդվածներ,
- ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ, 36-րդ և 110-րդ հոդվածներ,
- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ և 15- րդ հոդվածներ,
- ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 46-րդ, 59-րդ և 65-րդ հոդվածներ,
- Թափոնների մասին ՀՀ օրենք 12-րդ, 13-րդ հոդվածներ,
- ՀՀ Հարկային օրենսգրքի 166-րդ, 167-րդ, 168-րդ, 169-րդ, 170-րդ, 203-րդ, 204-րդ, 205-րդ, 212-րդ հոդվածներ:

*Աղյուսակ 9*

| ***Տնտեսվարող սուբյեկտների կողմից առավել հաճախ կատարված օրենսդրական խախտումներ*** | ***Իրավախախտումների քանակը*** | | |
|---|---|---|---|
| | ***2019 թվական*** | ***2020 թվական*** | ***2021 թվական*** |
| ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք | **64** | **32** | **101** |
| ՀՀ ջրային օրենսգիրք | **81** | **58** | **71** |
| ՀՀ հողային օրենսգիրք | **30** | **20** | **64** |
| ՀՀ հարկային օրենսգիրք | **57** | **35** | **140** |
| Թափոնների մասին ՀՀ օրենք | **40** | **28** | **91** |
| Մթնոլորտային օդի պահպանության մասին ՀՀ օրենք | **36** | **21** | **93** |
| Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենք | **13** | **7** | **24** |
| Պաշտոնական վիճակագրության մասին ՀՀ օրենք | **5** | **3** | **39** |
| Ստուգումների կազմակերպման և անցկացման մասին ՀՀ օրենք | **0** | **1** | **7** |
| Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին ՀՀ օրենք | **0** | **1** | **0** |
| Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենք | **0** | **2** | **0** |
| Լիցենզավորման մասին ՀՀ օրենք | **1** | **5** | **11** |
| Անտառային օրենսգիրք | **11** | **2** | **24** |
| Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք | **5** | **1** | **14** |
| **Ընդամենը** | **343** | **216** | **679** |



## ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Բնապահպանության և ընդերքի ոլորտներում ռիսկերի առկա իրավիճակի վերլուծության իրականացման համար հիմք են հանդիսացել 2019-2020-2021 թվականների ընթացքում իրականացված վերահսկողության արդյունքները՝ առավել բարձր ռիսկային ուղղությունների բացահայտման նպատակով:

ՀՀ կառավարության 2019 թվականի օգոստոսի 22-ի N 1125-Ն որոշմամբ 2021 թվականի ընքացքում իրականացվել է թվով 2963 ստուգման ենթակա տնտեսավարող սուբյեկտների դասակարգում՝ ըստ ռիսկայնության աստիճանների (տես՝ ՀՀ վարչական տարածքներով քարտեզը)՝

- բարձր ռիսկայնության՝ 573
- միջին ռիսկայնության՝ 1497
- ցածր ռիսկայնության՝ 893:

Հարկ է նշել, որ 2021 թվականի ընքացքում իրականացված և ավարտված թվով 213 տնտեսավարող սուբյեկտների ստուգումից առաջ և հետո առկա է ռիսկայնության գնահատման հետևյալ պատկերը՝

***ստուգումից առաջ՝***

- բարձր ռիսկայնության՝ 143
- միջին ռիսկայնության՝ 59
- ցածր ռիսկայնության՝ 11

***ստուգումից հետո՝***

- բարձր ռիսկայնության՝ 53
- միջին ռիսկայնության՝ 129
- ցածր ռիսկայնության՝ 31:

## Տեսչական մարմնի կողմից վերահսկման ենթակա թվով 2963 տնտեսավարող սուբյեկտների ռիսկայնությունը՝ ըստ վարչական տարածքների



## Բուսական և կենդանական աշխարհի օգտագործման և պահպանության վերահսկողության ուղղություններ

2021 թվականին բուսական աշխարհի օգտագործման և պահպանության ոլորտում իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրվել է թվով 1068 իրավախախտում, արդյունքում հարուցված վարչական վարույթներով կիրառվել է թվով 272 վարչական տույժ, նշանակվել է 28,780,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք և հաշվարկվել է շրջակա միջավայրին հասցված 1,004,640,274 ՀՀ դրամի չափով վնաս:

Անտառտնտեսություններում իրականացվել է թվով 8 ստուգում, որի արդյունքում հայտնաբերվել են ՀՀ անտառային և ՀՀ հողային օրենսգրքերի, «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», «Բուսական աշխարհի» մասին, «Թափոնների մասին» ՀՀ օրենքների պահանջների խախտումներ: Թվով 3 ստուգման նյութերն ուղարկվել են ՀՀ իրավապահ մարմիններին:

Հարկ է նշել, որ Տեսչական մարմնի ձևավորումից հետո սույն ոլորտում իրականացված հետևողական վերահսկողության արդյունքներով կայուն բարձր ռիսկային և նախորդ տարիների կտրվածքով երկարաժամկետ բնույթ են կրում համատարած ապօրինի ծառահատման և ձեռքբերված փայտանյութի տեղափոխման վերաբերյալ հիմնախնդիրները:

Ապօրինի ծառահատումների աշխարհագրության վերլուծությունը ցույց է տալիս, որ հատվող ծառերի քանակի տեսանկյունից առավել խնդրահարույց են ՀՀ Տավուշի, Լոռու և Կոտայքի մարզերը:

Տեսչական մարմնի կողմից հավաքագրված վիճակագրական տվյալների համաձայն (Աղյուսակ 7 և Գրաֆիկ 1) վերջին հինգ տարիների ընթացքում իրականացված ապօրինի ծառահատումների առավելագույն քանակը բաժին է ընկել 2017 թվականին, որից հետո դիտարկվող ցուցանիշը նվազել է մոտ երկու անգամ: Տվյալները վկայում են, որ 2021 թվականին հատված ծառերի քանակը համադրելի է 2018-2020 թվականների նույն ցուցանիշի հետ: Վերոհիշյալ վերլուծությունից պարզ է դառնում, որ 2017 թվականին ապօրինի ծառահատումներ բացառող մոտեցման որդեգրումից հետո, մասնավորապես՝ տեսչական վերահսկողության ավելացմամբ ոլորտում արձանագրվել են դրական փոփոխություններ:

Միևնույն ժամանակ, 2017 թվականից հետո ապօրինի ծառահատումների բացառման կամ դրանց նվազման հարցում չի գրանցվել բեկումնային որևէ փոփոխություն:




Կարելի է փաստել նաև, որ COVID 19-ի, Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրությամբ պայմանավորված, սոցիալ-տնտեսական տարբեր խնդիրների, փայտանյութի բարձր պահանջարկի պատճառով իրականացվող անտառահատումները ևս նպաստել են վերոհիշյալ խնդրի խորացմանը:

Հարկ է նշել նաև, որ առկա իրավախախտումների բացառման նպատակով Տեսչական մարմնի ու իրավապահ և այլ պետական մարմինների միջև մշտապես իրականացվում է ակտիվ համագործակցություն: Նշված համագործակցության շրջանակներում՝ անշարժ հենակետերում ստուգվում է տեղափոխվող փայտանյութի ձեռքբերման օրինականությունը, իրավապահ և այլ պետական մարմինների կողմից ներկայացված նյութերի առնչությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Տեսչական մարմինը իրականացնում է բնությանը պատճառված վնասի չափի հաշվարկ և այլն:

Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողության արդյունքում վեր են հանվել նաև ոլորտում առկա մի շարք այլ հիմնախնդիրներ: Տեսչական մարմնի կողմից

հավաքագրված տվյալների հիման վրա ներկայումս վերլուծվում է անտառտնտեսությունների կողմից հատատեղերի շահագործման, թափուկի դուրսբերման և ցանկացած տիպի փայտանյութի տրամադրման գործընթացները կարգավորող օրենսդրական ակտերում փոփոխությունների իրականացման անհրաժեշտության խնդիրը, որը պետք է միտված լինի ապօրինի հատվող ծառերի մասով առկա դրության բարելավմանը:



## Մթնոլորտային օդի, ջրերի, հողերի, վտանգավոր նյութերի և թափոնների գործածության, օգտագործման և պահպանության ուղղություններ

2021 թվականին սույն ուղղություններով իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրվել է թվով 448 իրավախախտում, արդյունքում հարուցված վարչական վարույթներով կիրառվել է թվով 381 վարչական տույժ, նշանակվել է 39,930,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք և հաշվարկվել է շրջակա միջավայրին հասցված 954,721,028 ՀՀ դրամի չափով վնաս:

Թվով 61 տարբեր ոլորտային արտադրություններում թափոնների տեղադրում, փոխադրում և վնասազերծում իրականացնող, հասարակական սննդի կազմակերպություններում իրականացված ստուգումների արդյունքներով արձանագրվել են հիմնականում ՀՀ հարկային, ջրային և հողային օրենսգրքերի, «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», «Թափոնների մասին», «Լիցենզավորման մասին» և «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքների պահանջների խախտումներ:

Իրականացված վերահսկողությունը և հավաքագրված տեղեկատվությունը վկայում են, որ տնտեսավարող սուբյեկտների 80-90%-ի մոտ արձանագրվում են խախտումներ՝ կապված մթնոլորտ վնասակար նյութերի (անօրգանական փոշու, ծծմբային անհիդրիդի, ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդների, ծանր մետաղների, ֆորմալդեհիդի, ցիանաջրածնի և այլ վնասակար նյութերի) արտանետումների կոնցենտրացիաների հետ՝ թույլտվությունների բացակայությամբ կամ թույլտվություններով սահմանված չափաքանակների

արտանետումների գերազանցմամբ: Միջինում մեկ տնտեսավարող սուբյեկտի կտրվածքով արտանետումների քանակները գերազանցում են սահմանված չափաքանակները մինչև 5 և ավել անգամ:

2020-2021 թվականների ընթացքում թափոնի տեղադրում և տեղափոխում իրականացնող թվով 10 կազմակերպություններում կատարված ստուգման արդյունքներով հայտնաբերված իրավախախտումները վերաբերել են արտադրական և սպառման թափոնների չթույլատրված տեղերում տեղադրման, սահմանված կարգին համապատասխան վտանգավոր թափոնների անձնագրերի բացակայության, թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի բացակայության, թափոնների գույքագրման, սկզբնական և ընդհանուր հաշվառման գրքերի վարման բացակայության, վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզիաների բացակայության դեպքերին:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում չի գործում թափոնների կառավարման արդյունավետ համակարգ, թափոններով ծածկված անվերահսկելի տարածքները ընդլայնվում են՝ արդյունքում ոլորտը համարվում է բարձր ռիսկային:

Շինարարության ոլորտում իրականացված վերահսկողությամբ թվով 21 շինարարական ընկերությունների մոտ արձանագրվել են ՀՀ ջրային օրենսգրքի, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներ՝ շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկված չեն շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով, օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակները չեն ջրվում՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս, սորուն նյութերը (ավազ, գաջ, ցեմենտ) պահեստավորված չեն փակ տարածքներում կամ ծածկված չեն անթափանց թաղանթներով:

Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրվել են նաև հողի բերրի շերտի ապօրինի օգտահանման, պահպանման և տեղափոխման մասով իրավախախտումներ:

Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողությամբ արձանագրվել են ՀՀ տարածքում մակերևույթային ջրային ռեսուրսներից ջրառ իրականացնող թվով 17 ՀԷԿ-երի և ՓՀԷԿ-երի ջրօգտագործման արդյունքում գետերի էկոլոգիական թողքերի պահպանման և

ծկնապաշտպան կառույցների, սարքավորումների բացակայության դեպքեր: Վերահսկողության արդյունքում նշանակվել է 3,350,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք և հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված 626,691,141 ՀՀ դրամի չափով վնաս:



## Ընդերքօգտագործման և պահպանության ուղղություն

Թվով 66 ընդերքօգտագործողների մոտ իրականացված ստուգումների արդյունքներով արձանագրվել են ՀՀ ընդերքի, հարկային, ջրային և հողային օրենսգրքերի, «Մթնոլորտային օդի պահպանության մասին», «Շրջակա միջավայրի ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», «Թափոնների մասին», «Լիցենզավորման մասին» և «Պաշտոնական վիճակագրության մասին» և «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքների պահանջների թվով 366 խախտումներ, որոնցով էլ պայմանավորված է սույն ուղղության առավել բարձր ռիսկայնությունը: Վերահսկողության արդյունքում նշանակվել է 7,070,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք և հաշվարկվել է շրջակա միջավայրին պատճառված 166,760,011 ՀՀ դրամի չափով վնաս:

Իրականացված վերահսկողության արդյունքում Տեսչական մարմնի կողմից բացահայտվել են, որ ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման իրավունք ունեցող կազմակերպությունները (60% և ավելի) չեն վարում երկրաբանական, մարկշեյդերական քարտեզագրում և այլ փաստագրություններ, որոնք ունեն առանցքային նշանակություն հանքարդյունաբերության գործընթացում: Վերջինիս հետևանքով ընդերքօգտագործման աշխատանքները չեն իրականացվում օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պայմաններին համապատասխան: Ընդերքօգտագործողների մոտ իրավախախտումներ են արձանագրվել ընդերքօգտագործման թույլտվության և լեռնահատկացման ակտի կոորդինատներով սահմանված ընդերքի տեղամասի սահմաններում գործունեություն ծավալելու հետ: Արձանագրվել են նաև իրավախախտումներ հողամասերի նպատակային

գործառնական նշանակության օգտագործման, հողի բերրի շերտի օգտահանման և վաճառքի, թափոնների գոյացման նորմատիվների և դրանց տեղադրման սահմանաքանակների նախագծերի պետական կառավարման լիազորված մարմնի հաստատմանը չներկայացման, թափոնների պետական հաշվառման և անձնագրավորման սահմանած կարգով չիրականացման, մթնոլորտային օդի պահպանության նպատակով անշարժ և շարժական աղբյուրներից աղտոտվող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների չպահպանման կամ թույլտվության բացակայության և այլ խախտումներ:

Տեսչական մարմնի կողմից իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ երկրաբանական, մարկշեյդերական քարտեզագրման և այլ փաստագրությունների իրականցման դեպքում տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող խախտումները կնվազեն 60-70%-ով: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման ոլորտի կադրային սղությունը ևս խոչընդոտ է Տեսչական մարմնի կադրային հագեցվածությունն ապահովելու և ոլորտի համապարփակ վերահսկողությունն իրականացնելու համար:



## Սահմանված ժամկետում հաշվետվությունների ներկայացման ուղղություն

Տեսչական մարմնի կողմից 2021 թվականին սույն ուղղության վերահսկողության արդյունքում արձանագրվել է թվով 338 իրավախախտում, արդյունքում հարուցված վարչական վարույթներով կիրառվել է թվով 324 վարչական տույժ, նշանակվել է 19,810,000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք:

Տեսչական մարմնի կողմից իրականացված վերահսկողության, ինչպես նաև Պետական եկամուտների կոմիտեի կողմից ստացված տեղեկատվության ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են ՀՀ հարկային օրենսգրքի և «Պաշտոնական վիճակագրության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներ, այն է՝ սահմանված ժամկետում տնտեսավարող սուբյեկտների կողմից սահմանված ժամկետում հաշվետվությունների ուշ ներկայացում, աղավաղում և չներկայացում: Աղյուսակ 1-ում ներկայացված նախորդ երկու տարիների իրավախախտումների վիճակագրությունը վկայում է սույն ուղղության բարձր ռիսկայնությունը:

Հարկ է նշել, որ Տեսչական մարմինը՝ որպես լիազոր մարմին, անմիջական հասանելիություն չունի միասնական հարկային հաշվարկի էլեկտրոնային համակարգին, որն էլ առաջացնում է մի շարք խոչընդոտներ Տեսչական մարմնին վերապահված գործառույթների լիարժեք, օպերատիվ և արդյունավետ իրականացման առնչությամբ:



# ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ, ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՅՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ, ՈՐՈՆՔ ՏԱԼԻՍ ԵՆ ԴՐԱՆՑ ՀՍՏԱԿ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ.

ՀՀ բոլոր մարզերում Տեսչական մարմնի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կողմից իրականացված վերահսկողական աշխատանքների ընթացքում կատարվել են իրազեկման աշխատանքներ շուրջ 370 հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, որսորդների, ձկնորսների, քաղաքացիների հետ, իրենց իրավունքների և պարտականությունների ոլորտային իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով:

Հարկ է նշել, որ Տեսչական մարմնի տարածքային բաժինների կողմից 2021 թվականի ընթացքում թվով 140 տնտեսավարող սուբյեկտի հետ կազմակերպվել է թվով 11 հանդիպում, որի ընթացքում ներկայացվել են բնապահպանության և ընդերքի ոլորտների օրենսդրական փոփոխությունները և լրացումները:

Մասնավորապես՝

- ՀՀ-ում գործունեություն իրականացնող տնտեսավարողները իրազեկվել են, որ 2021 թվականի հոկտեմբերի 17-ից Տեսչական մարմինը «Բնապահպանական վերահսկողության մասին» օրենքի 29.1 հոդվածով նախատեսված լիազորությունների շրջանակում իրավունք ունի իրականացվող ստուգումների կամ դիտարկման շրջանակներում անհապաղ կասեցնել բնապահպանական օրենսդրության խախտումներով իրականացվող տնտեսվարողների գործողությունները կամ գործունեությունը:

Վերոհիշյալ օրենսդրական կարգավորումների մասին ծանուցվել է ավելի քան 2100 տնտեսավարող՝ առձեռն, էլեկտրոնային ծանուցումների, ձեռնարկների թերթիկների, բուկլետների և ուղեցույցերի միջոցով: Պարբերաբար հրապարակումներ են կատարվել նաև ԶԼՄ-ներում:

Տնտեսավարողների հետ քննարկվել են նաև թափոնների կառավարման, տրված ջրօգտագործման թույլտվությունների պահանջների կատարման և պահպանման,

սահմանային թույլատրելի արտանետումների, հողի բերրի շերտի օգտագործման, հաշվառման, պահպանման կարգերը, տնտեսավարող սուբյեկտների դեմ դիմում-բողոքների, վարչական վարույթների, դատական գործերի, օրենսդրական բացերի, բնապահպանական օրենսդրության պահանջների պահպանման և մի շարք այլ հարցեր:

Կարևոր է նշել նաև, որ բնապահպանական իրավախախտումների կանխարգելման նպատակով 119 թեժ գծի միջոցով հանրությանը տրվել են վերահսկողության ոլորտներին վերաբերող պարզաբանումներ և խորհրդատվություն:

***Տնտեսավարող սուբյեկտների և հանրության կողմից հաճախ տրված հարցերը և իրավական կարգավորումները.***

Հարց - Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական եռամսյակային հաշվարկի, վարչական վիճակագրական հաշվետվությունների լրացման կարգերի վերաբերյալ:

Կարգավորում - Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների միասնական հարկային հաշվարկի ներկայացման կարգը սահմանելու մասին» N 1291-Ն որոշում:

Հարց - Հողերի օգտագործման և պահպանության ոլորտում՝ հողի բերրի շերտի տեղափոխման աշխատանքների կատարում:

Կարգավորում - Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգիրք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 8-ի «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1396-Ն որոշում:

Հարց - Մթնոլորտային օդի պահպանության ոլորտում՝ անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակների, արտանետման թույլտվությունների ստացում և օբյեկտների շինարարության ընթացքում արտանետումները կանխարգելող միջոցառումներ:

Կարգավորում - «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք և Հայաստանի Հանրապետության կառավարության 27 դեկտեմբերի 2012 թվականի «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1673-Ն որոշում:

Հարց - Կենդանական և բուսական աշխարհների օգտագործման և պահպանության ոլորտում՝ բնապահպանական իրավախախտումների, իրականացվող վարչական վարույթների, դրանցով հաշվարկվող բնությանը պատճառված վնասների հաշվարկի և կիրառվող վարչական տուգանքների, անվճար թափուկ փայտանյութի տրամադրման, դրա տնօրինման վերաբերյալ

Կարգավորում - ՀՀ անտառային, Վարչական իրավախախտումների մասին, ՀՀ քրեական օրենսգրքերով, Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների հաշվարկի մասին, Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին, Կենդանական աշխարհի մասին և Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքներով, ՀՀ բնապահպանության և գյուղատնտեսության նախարարների 2011թ. նոյեմբերի 29-ի «Ոչ արտադրական նպատակներով թափուկ վառելափայտի մթերման և բացթողնման» N 253-Ա և N 226-Ա հրամաններ:



# ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅՆ ՌԻՍԿԵՐԸ, ՈՐՈՆՑ ՎԵՐԱՀՍԿՄԱՆՆ ԵՆ ՈՒՂՂՎԱԾ, ԵՎ ՈՐՈՆՔ ԿԱՆԽԵԼ ԵՆ ԴՐԱՆՔ

Կանխարգելիչ գործողություններն իրականացվել են համաձայն Կառավարման խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 30-ի «Տեսչական մարմնի կանխարգելման և իրազեկման միջոցառումների 2021 թվականի տարեկան ծրագրի»:

Գործունեության լուսաբանման նպատակով հրապարակվել և զանգվածային լրատվական միջոցներին է ուղարկվել 129 մամուլի հաղորդագրություն, որը վերջիններիս կողմից ունեցել է շուրջ 929 տարածում:

Հանրությանը ներկայացվել է կատարված աշխատանքների արդյունքում հայտնաբերված իրավախախտումների մասին թվով 30 հաշվետվություն:

Ամենօրյա մոնիտորինգի է ենթարկվել ավելի քան 200 զանգվածային լրատվության միջոցի հրապարակում, ինչպես նաև սոցիալական ցանցի օգտատերերի գրառումներ: Ուսումնասիրվել է վերահսկողության ոլորտներին առնչվող շուրջ 870 հրապարակում, որի արդյունքում կազմվել է վերահսկողության ոլորտներին առնչվող իրավախախտումների առկայության վերաբերյալ թվով 31 զեկուցագիր:

Կազմակերպվել է պաշտոնատար անձանց թվով 25 հարցազրույց:

Կառուցվածքային և տարածքային աշխատողների կողմից իրականացվել են էկոկրթական դասաժամեր «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում, Երևան քաղաքի Ֆրիտյոֆ Նանսենի անվան հ.150 հիմնական դպրոցում, ՀՀ Արարատի մարզի Այնթապ համայնքի թիվ 2 դպրոցում, որոնք լուսաբանվել են պաշտոնական կայքէջով և ԶԼՄ-ներով:

Պաշտոնական կայքէջի, ԶԼՄ-ների և էլեկտրոնային հարթակների միջոցով հանրությանը ներկայացվել է թվով 10 խորհրդատվական բնույթի նյութ՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի պահանջները խախտելու դեպքերում նախատեսված տուգանքների վերաբերյալ, այն է՝

- խոզանները, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքները, արոտավայրերի ու խոտհարքների բուսականությունը գյուղատնտեսական,

անտառամերձ, անտառային ու բնության հատուկ պահպանվող տարածքների հողերում բուսածածկն այրելու,

- կենդանիների բնակության միջավայրի և միգրացիայի ուղիների պահպանության կանոնները խախտելու,
- կենդանիների ինքնագլուխ վերաբնակեցումը, կլիմայավարժեցումը և խաչասերումը, ինչպես նաև կենդանաբանական հավաքածուների ստեղծման, համալրման, պահպանման, օգտագործման և հաշվառման կանոնները, կենդանաբանական հավաքածուների առևտրի կանոնները, ինչպես նաև կենդանական աշխարհի օբյեկտներ ու կենդանաբանական հավաքածուներ արտերկիր տեղափոխելու վերաբերյալ:

***119 ԹԵԺ ԳԾԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ***

Տեսչական մարմնի 119 թեժ գծի արդիականացման նպատակով «Քրոսսնեթ» ՍՊ ընկերության կողմից իրականացվել է հեռախոսագծերի հեշտ և օպերատիվ կառավարման և վերահսկման արդիականացման աշխատանքներ (ծառայությունների ակտիվացման, զանգերի ձայնագրման և զանգերի վերծանման առցանց հնարավորություն ցանկացած պահի):

Հաշվի առնելով, որ Տեսչական մարմնի թեժ գծին ահազանգում են քաղաքացիների կյանքին, առողջությանը, իրավաբանական և ֆիզիկական անձանց, պետության օրինական շահերին, կենդանիներին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելու վտանգի, ինչպես նաև բնական կամ տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների առաջացման վտանգի մասին, ուստի անհրաժեշտություն էր առաջացել ահազանգերին արձագանքել ոչ աշխատանքային ժամերին, իրականացնել դրանց ձայնագրումը և ոչ աշխատանքային ժամերի զանգերը վերահասցեավորել՝ այլ հեռախոսահամարի:

2021 թվականի նոյեմբերի 1-ից շահագործվում է արդիականացված թեժ գիծը:

***Թեժ գծի 119 հեռախոսահամարի և էլեկտրոնային հարթակների միջոցով ստացված ահազանգերի վիճակագրական տվյալների վարում:***

Ստացվել է թվով 120 ահազանգ, որից 42-ը բուսական և կենդանական աշխարհի օգտագործման և պահպանման վերաբերյալ, 14-ը՝ մթնոլորտային օդի և ջրերի աղտոտման վերաբերյալ, իսկ 64-ով տրամադրվել է խորհրդատվություն:

Բարձրացված բոլոր հարցերին տրվել է օրենքով սահմանված կարգով համապատասխան ընթացք, ինչպեսն նաև իրականացվել է արագ արձագանքում:

Յութուբյան կայքէջում հրապարակվել է 52  տեսահոլովակ/տեսանյութ:

Պաշտոնական կայքէջով հանրությանը պարբերաբար ներկայացվել են օրենսդրական փոփոխությունները և կարգավորումները, Կառավարման խորհրդի արձանագրություններն ու որոշումները, Տեսչական մարմնի կառուցվածքի և հաստիքացուցակի փոփոխությունները, թափուր պաշտոնների վերաբերյալ մրցույթները և նշանակումները:

Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի և էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի («ԷԿԵՆԳ» ՓԲԸ) հետ իրականացվող Տեսչական մարմնի պաշտոնական նոր կայքէջի ստեղծման աշխատանքները գտնվում են ավարտական փուլում:

Կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելման նպատակով էլեկտրոնային հարթակներով հրապարակվել է անհրաժեշտ կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ թվով 16 տեղեկատվական  տեսանյութ:

Ապահովվել է տեղեկատվության հասանելիությունը, հետադարձ կապը, գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը:



## 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Տեսչական մարմնի կարողությունների զարգացման, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ համագործակցային հարաբերություններ հաստատելու և ամրապնդելու նպատակով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

2021 թվականի ընթացքում Տեսչական մարմնի մասնագետների կողմից իրականացվել են «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 2020-2022 թվականների «Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի մոնիտորինգ «Կոպերնիկուս» համակարգով» ծրագրի շրջանակներում Սևանա լճի և ջրհավաք ավազանի

բնապահպանական մոնիտորինգ (մոնիտորինգ) իրականացնելու աշխատանքների կազմակերպման մասին» ՀՀ վարչապետի N 1326–Լ որոշմամբ սահմանված միջոցառումները:

ՀՀ-ում գործող մի շարք միջազգային կառույցների հետ ձեռք է բերվել փոխհամագործակցության պայմանավորվածություններ՝ Տեսչական մարմնի կարողությունների զարգացման, տեղեկատվության փոխանակման, մասնագետների վերապատրաստման, տեխնիկական աջակցության և մի շարք այլ հարցերի վերաբերյալ:

Մասնավորապես"

- Տեսչական մարմինը Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Հայաստան) հետ համատեղ «Հայաստանում էկոլոգիական միջանցքների ստեղծում» ծրագրի շրջանակներում իրականացնելու է «Բնությունը մենք ենք» սոցիալական գովազդի արշավը՝ վայրի կենդանիների պաշտպանությունը առավել արդյունավետ դարձնելու համար: Ծրագրի շրջանակում WWF-Հայաստանը Տեսչական մարմնին անհատույց սեփականության իրավունքով նվիրաբերել է թվով 2 գովազդային վահանակ (չափսը 3մx6մ)՝ ընդհանուր 1,380,000 ՀՀ դրամ արժողությամբ, որը ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 7-ի N 1640-Ա որոշմամբ ընդունվել և ամրացվել է Տեսչական մարմնին: Ներկայումս աշխատանքներ են ընթանում գովազդային վահանակների տեղադրման ուղղությամբ:
- WWF-Հայաստանը Տեսչական մարմնի վերահսկողական աշխատանքների աջակցման նպատակով ձեռք է բերել թվով 1 անօդաչու թռչող սարք՝ նվիրաբերելու նպատակով:
- Տեսչական մարմնի և Կովկասի Բնության Հիմնադրամ (CNF)-ի միջև ստորագրվել է Փոխըմբռնման հուշագիր: Կենսաբազմազանության պահպանմանն ուղղված վերահսկողության իրականացման նպատակով Տեսչական մարմնին նվիրաբերվելու է երկու ավտոմեքենա, մեկ անօդաչու սարք, մեկ նոթբուք: Պլանավորվել է նաև Տեսչական մարմնի կարողությունների հզորացման նպատակով նվիրաբերել համակարգչային սերվերային համակարգ էլեկտրոնային վերահսկողության ծրագրի ստեղծման և ներդրման համար:



# ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ, ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ ԲԵՌԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Օրենսդրական բացերը լրացնելու, Տեսչական մարմնի կողմից իրականացվող վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու և տնտեսավարող սուբյեկտների համար վարչական և վերահսկողական բեռը նվազեցնելու նպատակով՝ առաջարկվել է իրականացնել փոփոխություններ և լրացումներ հետևյալ իրավական ակտերում՝

***<u>2021 թվականի ընթացքում ընդունված ՀՀ կառավարության որոշումներ.</u>***

- ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 27-ի «Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պետական տեսուչի համազգեստի և բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարբերանշանի նկարագրերը և ձևերը հաստատելու մասին» N 2085-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին N 100-Ն որոշմամբ հաստատվել է նոր համազգեստի ձևը:
- ՀՀ կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 7-ի N 1640-Ա որոշմամբ որպես նվիրաբերություն Հայաստանի Հանրապետությունը ընդունել է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից տրամադրված 2 գովազդային վահանկները (1,380,000.00 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ) և հանձնվել է Տեսչական մարմին:
- ՀՀ կառավարության 2021 թվականի հունիսի 24-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից անցկացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 19-ի N 1343-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1423-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1041-Ն որոշմամբ լրացվել է նոր՝ N 12 հավելվածով՝ Կենդանական աշխարհի օգտագործման և պահպանության համար:

- ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N 1511-Ն և 2012 թվականի նոյեմբերի 22-ի N 1562-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1125-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին N 811-Ն որոշում:
- Տեսչական մարմնի բնականոն գործունեությունն ապահովելու համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի թիվ 194-Ն որոշման մեջ կատարվել է փոփոխություններ՝ ավելացվել է թվով չորս տրասնպորտային միջոց:
- ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2215-Ն որոշման N 10 հավելվածում կատարվել է լրացում N 2055-Ն որոշմամբ՝ ԶՊՄԿ-ում իրականացվող ստուգման շրջանակներում «Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերությունից մեկ անձից գնում կատարելու մասին:
- ՀՀ կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 1957-Ն որոշմամբ լրացումներ և փոփոխություններ է կատարվել ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 2242-Ն որոշման մեջ, որով սահմանվել է Տեսչական մարմնի պետական տեսուչին հատկացվող զենքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը, ինչպես նաև զենք կրելու իրավունք ունեցող պաշտոնների անվանացանկը:



## ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԶՈՐԱՑՈՒՄ

Տեսչական մարմնի, ԵՊՀ կենսաբանության, աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետների, Հայաստանի ազգային ագրարային, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանների միջև ստորագրվել են համագործակցության

հուշագրեր՝ ուսանողների մասնագիտական գիտելիքների, կարողությունների զարգացման, ուսումնական, արտադրական, նախաավարտական պրակտիկաների անցկացման և վերապատրաստումների վերաբերյալ: ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի թվով 4 ուսանող իրենց ուսումնական պրակտիկան հաջողությամբ անցկացրել են Տեսչական մարմնում, իսկ կենսաբանության ֆակուլտետի թվով 70 ուսանող՝ վերապատրաստում Ծաղկաձորում:

Տեսչական մարմնի կողմից մշակվել և Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ է ներկայացվել առաջարկություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 18-ի «Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի պետական տեսուչի համազգեստի նկարագիրը և ձևը, պետական տեսուչի համազգեստի կրելու կարգն ու պայմանները հաստատելու մասին» N 2085-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, որը պայմանավորված է գործող որոշմամբ սահմանված համազգեստի նկարագրի ոչ բավարար լինելու հետ, այն է՝ համազգեստը նախատեսված չէ տարվա 4 եղանակային պայմաններին կրելու համար:

Ձև Ձմեռային

Ձև Ամառային



ՆԿԱՐ 1.



ՆԿԱՐ 2.



ՆԿԱՐ 3.



ՆԿԱՐ 4.



ՆԿԱՐ 5.



ՆԿԱՐ 6.



ՆԿԱՐ 7.



ՆԿԱՐ 8.

Ձև գարնանային/աշնանային տղամարդու

Ձև գարնանային/աշնանային կանացի

***Տրասնպորտային միջոցների ավելացում***

- Բնապահպանության և ընդերքի ոլորտներում գործունեություն ծավալող Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում և մայրաքաղաքում տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ իրականացվում է վերահսկողություն, որն իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի թիվ 194-Ն որոշման մեջ կատարվել են փոփոխություններ և տրասնպորտային միջոցների թվաքանակն ավելացվել է չորսով:

***Լաբորապոր հագեցվածության ապահովում***

- Լաբորատոր հետազոտությունների բաժինը ներկայումս առկա ոչ բավարար կարողություններով իրականացնում է ջրի, հողի, գազային միացությունների նմուշառում, ինչպես նաև կատարում է աղտոտիչ նյութերի և միացությունների ֆիզիկա-քիմիական անալիզներ և ստացված արդյունքները համեմատում գործող բնապահպանական նորմերի հետ, որն էլ հիմք է հանդիսանում շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկմանը: 2021 թվականի կտրվածքով վերահսկողության շրջանակներում իրականացվել է թվով 1125 լաբորատոր փորձաքննություն, որից մթնոլորտային օդի՝ 68, արտահոսքի՝ 1010 և հողի՝ 47:
- Հարկ է նշել, որ ներկայումս լաբորատորիան զբաղեցնում է 230մ2 տարածք, իր տեխնիկական հագեցվածությամբ չի համապատասխանում ժամանակակից պահանջներին: Լաբորատորիան անալիտիկ հետազոտությունները և գազային միացությունների չափագրումը իրականացնում է 2006 թվականին նոյեմբերին համալրված սարքավորումներով, որոնց մի մասը թերկոմպլեկտավորված է և հնարավոր չէ շահագործել, իսկ մյուս մասն արդեն բարոյապես մաշվել է: Լաբորատորիան խիստ կարիք ունի շենքային պայմանների հիմնավերանորոգման և լաբորատոր գույքի և ժամանակակից սարքավորումների կահավորման:
- Մթնոլորտային օդում փոշու քանակությունը չափելու նպատակով՝ ՀՀ պետական բյուջեի միջոցներով լաբորատորիան համալրվել է մեծ արագությունների ասպիրատորով:

## ԿԱԴՐԱՅԻՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

***Տեսչական մարմնի գործող հաստիքացուցակի փոփոխություններ***

- Խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգողների հինգ հաստիքից կրճատվել է երեքը (որից՝ երկուսը թափուր) և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հուլիսի 11-ի N 868-Ն որոշման պահանջը Տեսչական մարմնի հաստիքացուցակում ավելացվել է մեկ «Բյուջետային գործընթացի պատասխանատու» հաստիքը:
- Տեսչական մարմնի աշխատանքները արդյունավետ կազմակերպելու և հետագա ստուգումների կազմակեպման գործընթացը պատշաճ և ժամանակին կազմակերպելու նպատակով քաղաքացիական աշխատանք կատարող թափուր հաստիքներից կրճատվել է՝ երկու պահակի, մեկ իրավախորհրդատուի, ինչպես նաև մեկ լաբորատոր հետազոտությունների բաժնի ավագ մասնագետի քաղաքացիական ծառայության թափուր հաստիքը:
- Վերը նշված կրճատված 6 հաստիքները համալրվել են քաղաքացիական ծառայության հաստիքներով:

***Պաշտոնների դասակարգում և պաշտոնների անձնագրերի հաստատում***

- Հայաստանի Հանրապետության առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 11-ի թիվ 3-Ն որոշման համաձայն Տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության պաշտոնները գնահատվել, դասակարգվել են, ինչպես նաև կազմվել են քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը, սահմանվել են իրավունքները և պարտականությունները, որից հետո Տեսչական մարմնի կառավարման խորհրդի 13.05.2021 թվականի թիվ 14-Լ և 15-Լ որոշումներով հաստատվել են հաստիքացուցակի նախագիծը և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը:

***Տեսչական մարմնի աշխատողների խրախուսում և ծառայողական քննություններ***

- 2021 թվականի ընթացքում Տեսչական մարմնի ղեկավարի կողմից շնորհակալագրով խրախուսվել են թվով 25 աշխատող:
- Ծառայողական քննության արդյունքներով կարգապահական պատասխանատվության են ենթարկվել թվով 3 աշխատող (Աղյուսակ 10):

*Աղյուսակ 10*

| Ժամանակահատված | Ծառայողական քննության արդյունքում կայացվել է որոշում | | |
|---|---|---|---|
| | *Կարգապահական խախտման առկայության մասին* | *Կարգապահական խախտման բացակայության մասին* | *Անհետևանք* |
| 2019 թվական | **4** | **11** | **5** |
| 2020 թվական | **3** | **2** | **3** |
| 2021 թվական | **3** | **4** | **0** |

# ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԵՎ ԴՐԱ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ԴԵՄ, ԲԵՐՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Վերադասության կարգով բողոքարկված գործերից բավարարվել է թվով 3 բողոք: Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով նշանակվել է ծառայողական քննություն՝ բողոքի բավարարման հիմքերը պարզելու նպատակով: Ծառայողական քննության արդյունքում երկու աշխատող ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

**Տեսչական մարմին վերադասության կարգով բողոքարկված գործեր**

| հ/հ | Բողոքաբեր | Բողոքի առարկայի նկարագիր | Վարչական տուգանքի չափը | Շրջակա միջավայրին հասցված վնասի չափը | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բազմաղբյուր համայնքի ղեկավար | ԲԸՏՄ Արագածոտնի տարածքային բաժնի պետի 2020 թվականի նոյեմբերի 30-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ 04/-71-Ա որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ | 50,000 | | Բողոքը մերժվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Սուսան Մանուկյան | ԲԸՏՄ Գեղարքունիքի Տ/Բ պետի ժամանակավոր պաշտոնակատարի 2020 թվականի սեպտեմբերի 1-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ 07/10 որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ | 80,000 | 59,400 | Բողոքը մերժվել է |
| 3 | «Գնթունիք» ՍՊԸ | ԲԸՏՄ Արագածոտնի տարածքային բաժնի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 142 ստուգման ակտը անվավեր ճանաչելու վերաբերյալ | 350,000 | 310,790 | Բողոքը մերժվել է |
| 4 | «Սևան Ակվա» ՓԲԸ | ԲԸՏՄ Գեղարքունիքի Տ/Բ պետի 2021 թվականի 05 ապրիլի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ 07/23-Վ որոշումն անվավեր ճանաչելու մասին | 80,000 | | Բողոքը մերժվել է |
| 5 | Հմայակ Սարգսի Ղազարյան | ԲԸՏՄ Արագածոտնի տարածքային բաժնի պետի 2021 թվականի ապրիլի 12-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ 04/-07-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին | 50,000 | | Բողոքը մերժվել է |
| 6 | Վահե Բեգլարյան | ԲԸՏՄ Լոռու տարածքային բաժնի 2021 թվականի մայիսի 7-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ ԼՏ/55-Ա և «Պետությանը պատճառված վնասի վերականգնման մասին» թիվ ԼՏ/48/01-Ա որոշումներն անվավեր ճանաչելու մասին | 100,000 | 36,000 | Բողոքը մերժվել է |
| 7 | Վազգեն Ադամյան | ԲԸՏՄ Գեղարքունիքի տարածքային բաժնի պետի 2021 թվականի  մարտի 22-ի «Վարչական տուգանք նշանակելու | 80,000 | | Բողոքը մերժվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | մասին» թիվ 07/09-Վ որոշումն անվավեր ճանաչելու մասին | | | |
| 8 | «Նաիրիան» ՓԲԸ | ԲԸՏՄ Երևանի տարածային բաժնի պետի 2021 թվականի հունիսի 10-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ ԵՏ/17-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին | 50,000 | | Բողոքը բավարարվել է |
| 9 | «Մալխասյանշին» ՍՊԸ | ԲԸՏՄ Երևանի տարածքայինբաժնի պետի 2021 թվականի հունիսի 10-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ ԵՏ/24-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին | 50,000 | | Բողոքը մերժվել է |
| 10 | «Արմփայփ» ՍՊԸ | ԲԸՏՄ Երևանի տարածային բաժնի պետի 2021 թվականի հունիսի 15-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ ԵՏ/26-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին | 50,000 | | Բողոքը բավարարվել է |
| 11 | Ռոման Շմավոնյան Ա/Ձ | ԲԸՏՄ Արագածոտնի տարածքային բաժնի պետի 2021 թվականի մայիսի 31-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ 04/-24-Ա որոշումն անփոփոխ թողնելու մասին | 50,000 | | Բողոքը մերժվել է |
| 12 | «Քաջարան համայնքի կոմունալ տնտեսություն» ՓԲԸ | ԲԸՏՄ Սյունիքի տարածքային բաժնի պետի 2021 թվականի հունիսի 4-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ ՍՏ/13-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին | 400,000 | | Բողոքը մերժվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 13 | «ՎԱՌՄԱՇ» ՍՊԸ | ԲԸՏՄ ղեկավարի 2021 թվականի հունիսի 1-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 27 որոշումն անվավեր ճանաչելու մասին | 700,000 | | Բողոքը մերժվել է |
| 14 | «Խաոնարան» ՍՊԸ | ԲԸՏՄ Կոտայքի Տ/Բ բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատարի 2021 թվականի օգոստոսի 3-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ 11/24-Ա, 11/25-Ա, 11/26-Ա և «Բնապահպանական օրենսդրության խախտման հետևանքով շրջակա միջավայրին պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու մասին» թիվ 11/04 որոշումներն անվավեր ճանաչելու վերաբերյալ | 250,000 | 314,400 | Բողոքը մերժվել է |
| 15 | «Մեծ Մեսրոպ» ՍՊԸ | ԲԸՏՄ Երևանի տարածային բաժնի 2021 թվականի օգոստոսի 18-ի թիվ 118 ակտն անվավեր ճանաչելու մասին | | 4,352,400 | բողոքը մերժվել է |
| 16 | «ԿԱՆԱՉ ՍԻՄՖՈՆԻԱ» ՍՊԸ | ԲԸՏՄ Տավուշի տարածքային բաժնի պետի 2021 թվականի օգոստոսի 16-ի թիվ 08/085/21-ՎՎՀ որոշումն անվավեր ճանաչելու մասին | 450,000 | | |
| 17 | «Սագամար» ՓԲԸ | ԲԸՏՄ ղեկավարի 2021 թվականի հունիսի 8-ի «Իրավախախտումները վերացնելու վերաբերյալ» թիվ 31 որոշումն անվավեր ճանաչելու մասին | | | Բողոքը մերժվել է |
| 18 | Սասուն Հակոբյան | ԲԸՏՄ Տավուշի տարածքային բաժնի պետի 2021 թվականի հունիսի 9-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 08/075/21-ՎՏ | 100,000 | 54,000 | Բողոքը մերժվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 19 | Արա Նազարյան | ԲԸՏՄ Երևանի տարածային բաժնի պետի 2021 թվականի մարտի 10-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ ԵՏ/05-Ա և «Բնապահպանական օրենսդրության խախտման հետևանքով բուսական աշխարհին պատճառված վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու վերաբերյալ» թիվ ԵՏՎ/01-Ա որոշումներն անվավեր ճանաչելու մասին | 400,000 | 445,000 | բողոքը մերժվել է |
| 20 | «ԱԳԱԹ-777» ՍՊԸ | ԲԸՏՄ Երևանի տարածային բաժնի պետի 2021 թվականի հոկտեմբերի 4-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» ԵՏ/86-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին | 150,000 | | Բողոքը մերժվել է |
| 21 | «777 Իմպեքս» | ԲԸՏՄ Երևանի տարածային բաժնի պետի 2021 թվականի հունիսի 15-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ ԵՏ/29-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին | 50,000 | | Բողոքը մերժվել է |
| 22 | Վաղինակ Վարդանյան Ա/Ձ | ԲԸՏՄ Արագածոտնի տարած քային բաժնի պետի 2021 սեպտեմբերի 1-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ 04/-48-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին | 50,000 | | Բողոքը մերժվել է |
| 23 | «Գետնատուն» ՍՊԸ | ԲԸՏՄ Վայոց ձորի տարածքային բաժնի պետի 2021 թվականի օգոստոսի 31-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» | 200,000 | | Բողոքը մերժվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | թիվ 09/21-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին | | | |
| 24 | «ԳԱ ԳՈՌ» ՍՊԸ | ԲԸՏՄ Արագածոտնի տարածքային բաժնի պետի 2021 թվականի սեպտեմբերի 1-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ 04/-47-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին | 50,000 | | Բողոքը մերժվել է |
| 25 | «Ծովածոց» ՍՊԸ | ԲԸՏՄ Գեղարքունիքի տարածքային բաժնի պետի 2021 թվականի նոյեմբերի 15-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 07/83-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին | 130,000 | | Բողոքը մերժվել է |
| 26 | «Կապան Էնեդժի» ՓԲԸ | ԲԸՏՄ Սյունիքի տարածքային բաժնի պետի 2021 թվականի հոկտեմբերի 27-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ ՍՏ 10/23-Ա և «Վնասի հատուցման պանջ ներկայացնելու մասին» թիվ ՍՏ 10/10-Ա որոշուներն անվավեր ճանաչելու մասին | 200,000 | 582,171,276 | Բողոքը մերժվել է |
| 27 | «Վադա Բեկ» ՍՊԸ | ԲԸՏՄ Կոտայքի Տ/Բ բաժնի պետի 2021 թվականի հոկտեմբերի 8-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ 11/47-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին | 50,000 | | Բողոքը բավարարվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 28 | «Ամբերդ ՀԷԿ» ՍՊԸ | ԲԸՏՄ Արագածոտնի տարածքային բաժնի պետի 2021 թվականի 2021 թվականի հոկտեմբերի 15-ի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ 04/-74-Ա, 04/-75-Ա և «Վնասի հատուցման պահանջ ներկայացնելու մասին» թիվ 04/-14-Ա որոշումներն անվավեր ճանաչելու մասին | 280,000 | 14,259,226 | Բողոքը մերժվել է |
| 29 | «Գրանիտ» ԱԿ | ԲԸՏՄ Լոռու տարածքային բաժնի 2021 թվականի դեկտեմբերի 3-ի «Վարչական տույժ նշանակելու մասին» թիվ ԼՏ/143-Ա որոշումն անվավերճանաչելու մասին | 50,000 | | Ընթացքի մեջ /նշանակվել է գործի քննություն/ |

| Դատական կարգով բողոքարկված գործեր | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | Հայցվոր (Բողոքաբեր) | Պատասխանող | Հայցապահանջի (Հայցի առարկայի) նկարագիր | Վարչական տուգանքի չափը | Շրջակա միջավայրին հասցված վնասի չափը | Կարգավիճակ |
| 1 | «Վակուֆլո» ՍՊԸ | Տեսչական մարմին | 12.08.2019թ. թիվ 43 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պ/մ | 200,000 | | Հայցը բավարարվել է |
| 2 | Փայլակ Խաչատրյան | Տեսչական մարմին | 16.09.2019թ. թիվ 07/63-Վ որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | 50,000 | | Հայցը մերժվել է, տուգանքի գումարը մուծված է |
| 3 | Արտակ Հասրաթյան | Տեսչական մարմին | 25.12.2019թ. թիվ 03/69-Ա | 50,000 | | Հայցը բավարարվել է |
| 4 | «Արմօյլ» | Տեսչական մարմին | 17.12.2018թ. Թիվ 020 որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | | | Ընթացքի մեջ է |
| 5 | «ԱՏ ՄԵՏԱԼՍ» ՍՊԸ | Տեսչական մարմին | 02.08.2019թ. Թիվ 034 որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | | 45,606,520 | Ընթացքի մեջ է |
| 6 | «Արագած Պեռլիտ» ՍՊԸ | Տեսչական մարմին | 14.02.2019թ. Թիվ 131 ստուգման ակտն անվավեր ճանաչելու պ/մ | 150,000 | 663,973 | Ընթացքի մեջ է |
| 7 | «Արթուր Տաթևիկ» ՍՊԸ տնօրեն Ավագ Միքայելյան | Տեսչական մարմին | 02.12.2019թ. Թիվ 02-14 որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | 300,000 | | Հայցը բավարարվել է |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8 | «Գաջեգործ» ՓԲԸ | Տեսչական մարմին | 13.02.2020թ. «Գաջեգործ» փակ բաժնետիրական ընկերությունում իրականացված ստուգման ակտ կետերը և 2020 թվականի փետրվարի 3-ին ընդունված «Բնօգտագործման վճարի բազայի չափաքանակների (սահմանափակումների)» թիվ 112 ստուգման ակտի կետերը ոչ իրավաչափ ճանաչելու պ/մ | 100,000 | 3,743,063 | Ընթացքի մեջ է |
| 9 | «Էյ Քեյ Էյ Ջի» ՍՊԸ տնօրեն Արբեն Ղուլյան | Տեսչական մարմին | թիվ 04/-72-Ա որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | 200,000 | 1,135,642 | Ընթացքի մեջ է |
| 10 | «Սանրայզէլեկտրիկ» ՓԲԸ տնօրեն Մայիս Մկրտչյան | Տեսչական մարմին | 28.09.2020թ. Թիվ 09/32-Ա և 23.10.2020թ. Թիվ 29 որոշումներն անվավեր ճանաչելու պ/մ | 200,000 | | Ընթացքի մեջ է |
| 11 | «Էլեգիս ՀԷԿ» ՍՊԸ տնօրեն Մայիս Մկրտչյան | Տեսչական մարմին | 28.09.2020թ. Թիվ 09/28-Ա և 23.10.2020թ. Թիվ 28 որոշումներն անվավեր ճանաչելու պ/մ | 200,000 | | Ընթացքի մեջ է |
| 12 | «Ղարագուլյաններ» ՓԲԸ | Տեսչական մարմին | 03.03.2021թ. թիվ 130 ստուգման ակտի նախագծի դեմ բերված բողոք | 300,000 | | Ընթացքի մեջ է |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 13 | «Հանքարդ» ՍՊԸ | Տեսչական մարմին | 08.04.2021թ. Թիվ 05 ակտը ոչ իրավաչափ ճանաչելու պ/մ | 500,000 | 961,200 | Ընթացքի մեջ է |
| 14 | Հայկ Մովսիսյան | Տեսչական մարմին | 24.12.2020թ. Թիվ 11/31-Ա որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | 150,000 | | Հայցը բավարարվել է |
| 15 | «Լեսոմա» ՍՊԸ տնօրեն Լավրենտին Միքայելյան | Տեսչական մարմին | 16.07.2020թ. Թիվ ՍՏ10/24-Ա որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | 200,000 | | Հայցը մերժվել է, տուգանքի գումարը մուծված է |
| 16 | «Ջաղացի Ձոր» ՓԲԸ | Տեսչական մարմին | 29.07.2020թ.թիվ 11/07 որոշումն վերացնելու պ/մ | | 1,471,440 | Գործը կարճվել է, հայցվորը վճարել է վնասը |
| 17 | «Ջաղացի Ձոր» ՓԲԸ | Տեսչական մարմին | 29.07.2020թ.թիվ 11/22-Ա որոշումը վերացնելու պ/մ | 200,000 | | Գործը կարճվել է, հայցվորը վճարել է տուգանքը |
| 18 | Գագիկ Սահակյան | Տեսչական մարմին | 04.02.2020թ. Թիվ ԼՏ/14-Ա որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | 300,000 | | Ներկայացվել է հարկադիր կատարման |
| 19 | Թաթուլ Շահինյան | Տեսչական մարմին | 10.09.2019թ. Թիվ 08/156/19-ՎՏ որոշումը վերացնելու պ/մ | 150,000 | 130,500 | Ընթացքի մեջ է |
| 20 | «Ավազահատիկ» ՍՊԸ տնօրեն Գ.Գևորգյան | Տեսչական մարմին | 30.06.2021թ. Թիվ 36 որոշումը անվավեր ճանաչելու պ/մ | 150,000 | | Ընթացքի մեջ է |
| 21 | «Հասինեդ» ՍՊԸ տնօրեն | Տեսչական մարմին | 23.06.2021թ.թիվ 02-16 և 02/01-Ա որոշումները անվավեր ճանաչելու պ/մ | 550,000 | 81,000 | Ընթացքի մեջ է |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Ստեփան Խաչատրյան | | | | | |
| 22 | Մերուժան Ասատրյան | Տեսչական մարմին | 05.03.2020թ. Թիվ ԵՏ/04-Ա որոշումը վերացնելու պ/մ | 200,000 | | Հայցը բավարարվել է |
| 23 | «Լիլիթ 87» ՍՊԸ | Տեսչական մարմին | 21.08.2020թ.թիվ 84 ստուգման ակտը և վնասի հաշվարկը վերացնելու պ/մ | | 11,470,000 | Ընթացքի մեջ է |
| 24 | Արշակ Սարիբեկյան | Տեսչական մարմին | 23.06.2020թ.թիվ 08/097/20-ՎՏ որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | 150,000 | | Հայցը մերժվել է, ներկայացվել է կատարման |
| 25 | «Եղեգ ՀԷԿ» ՍՊԸ տնօրեն Հրաչիկ Վարդանյան | Տեսչական մարմին | 28.09.2021թ.թիվ 09/33-Ա որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | 200,000 | | Հայցը բավարարվել է |
| 26 | «Եղեգ ՀԷԿ» ՍՊԸ | Տեսչական մարմին | 03.07.2020թ. Թիվ 09/05-Ա որոշումը վերացնելու պ/մ | | 3,813,821 | Ընթացքի մեջ է |
| 27 | Արթուր Պետրոսյան | Տեսչական մարմին | 27.01.2021թ.թիվ ԼՏ/05-Ա և ԼՏ/05/01-Ա որոշումը անվավեր ճանաչելու մասին | 100,000 | 96,000 | Հայցը մերժվել է, հայցվորը դիմել է վերաքննիչ, ընթացքի մեջ է |
| 28 | «Երկաթբետոն» ԲԲԸ գլխավոր տնօրեն Մեխակ Սիմոնյան | | 20.10.2021թ. Թիվ ԵՏ/89-Ա որոշումը վերացնելու պ/մ | 730,000 | 1,156,320 | Ընթացքի մեջ է |
| 29 | «Բազենք» ՓԲԸ տնօրեն | | 24.09.2021թ. Թիվ 09/26-Ա որոշումը ամբողջությամբ վերացնելու պ/մ | 200,000 | | Ընթացքի մեջ է |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Արմեն Հակոբյան | | | | | |
| 30 | «Լիդիան Արմենիա» ՓԲԸ | Տեսչական մարմին | 24.08.2018թ. Թիվ 30 ստուգման ակտը և վարչական բողոքը մերժելու մասին 15.11.2018թ.թիվ 30/1 որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | | 28,949,391 | Հայցը բավարարվել է |
| 31 | Ժորա Ջհանգիրյան | Տեսչական մարմին | 16.04.2019թ.թիվ ԵՏ/22-Ա որոշումը վերացնելու պ/մ | 80,000 | | Հայցը մերժվել է, հայցվորը դիմել է վերաքննիչ, ընթացքի մեջ է |
| 32 | «Մերձմոսկովյան» ԲԲԸ | Տեսչական մարմին | 27.12.2017թ.թիվ 17-Ա ակտի կետերը ոչ իրավաչափ ճանաչելու պ/մ | | 629,900 | Հայցը բավարարվել է, բերվել է վերաքննիչ, վճռաբեկ բողոքներ, մերժվել է |
| 33 | «Սելենա» ԲԲԸ | Տեսչական մարմին | 18.04.2019թ. Թիվ ԵՏ/38-Ա որոշումը անվավեր ճանաչելու պ/մ | 80,000 | | Հայցը բավարարվել է, վերաքննիչը թողել է նույնը |
| 34 | «Հախվերդյան Շինմոնտաժ» ԲԲԸ | Տեսչական մարմին | 18.05.2019թ. Թիվ ԵՏ/34-Ա որոշումը անվավեր ճանաչելու պ/մ | 80,000 | | Հայցը բավարարվել է, վերաքննիչը թողել է նույնը |
| 35 | Սմբատ Ավետիսյան | Տեսչական մարմին | 12.12.2019թ.թիվ ՋՄ/05-Ա, թիվ ՄՎՏ 11-Ա որոշումները և ՋՄՀԹՎՆ-09 հանձնարարականը վերացնելու պ/մ | 300,000 | 3,367,941 | Հայցը բավարարվել է, վերաքննիչ բողոք է բերվել, ընթացքի մեջ է |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 36 | «Դեկորպրոֆ» ՍՊԸ | Տեսչական մարմին | 27.08.2019թ.թիվ ԵՏ/84-Ա որոշումը վերացնելու պ/մ | 50,000 | | Հայցը բավարարվել է, վերաքննիչը թողել է նույնը |
| 37 | «Մխչյանի ֆիշ» ՍՊԸ | Տեսչական մարմին | 27.12.2018թ.թիվ 111 ակտն ամբողջությամբ վերացնելու պ/մ | 200,000 | 585,169,920 | Հայցը բավարարվել է, վերաքննիչ բողոք է բերվել, ընթացքի մեջ է |
| 38 | «Մերի ֆիշ» ՍՊԸ | Տեսչական մարմին | 14.01.2019թ.թիվ 15 ստուգման ակտից և դրանով արձանագրված խախտումներից բխող իրավահարաբերությունների բացակայությունը ճանաչելու և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ակտը վերացնելու պ/մ | 200,000 | 64,722,240 | Հայցը բավարարվել է, վերաքննիչ բողոք է բերվել, ընթացքի մեջ է |
| 39 | «Լցոն» ՍՊԸ տնօրեն Վազգեն Աղջոյան | Տեսչական մարմին | 26.07.2019թ.թիվ 31 որոշումը անվավեր ճանաչելու պ/մ | 300,000 | | Հայցը բավարարվել է, վերաքննիչ բողոք է բերվել, ընթացքի մեջ է |
| 40 | «Անի» ԲԲԸ տնօրեն Գևորգ Մանուկյան | Տեսչական մարմին | 23.08.2019թ. Թիվ 06/29-Ա որոշումը վերացնելու պ/մ | 100,000 | | Հայցը բավարարվել է,վերաքննիչ դատարանը թողել է նույնը |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 41 | «ՄԷՍ ՍԹՈՈՒՆ» ՍՊԸ | Տեսչական մարմին | 10.07.2019թ. Թիվ 027 որոշումը և 29.05.2019թ. 129 ակտը անվավեր ճանաչելու պ/մ | | | Հայցը բավարարվել է, վերաքննիչ բողոք է բերվել, ընթացքի մեջ է |
| 42 | Գագիկ Բաղդասարյան | Տեսչական մարմին | 18.04.2019թ. թիվ ՄՎՏ 01-Ա որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | 300,000 | | Հայցը բավարարվել է, վերաքննիչը թողել է նույնը |
| 43 | Դավիթ Ղումաշյան | Տեսչական մարմին | 04.06.2019թ. Թիվ ԼՏ/54-Ա և 10.07.2019թ. Թիվ 28 որոշումները վերացնելու պ/մ | 50,000 | 265,320 | Հայցը բավարարվել է,վերաքննիչ բողոք է բերվել,ընթացքի մեջ է |
| 44 | «Լարգո-Վին» ՍՊԸ տնօրեն Վահագն Խաչատրյան | Տեսչական մարմին | 05.08.2021թ.թիվ 49 որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | 150,000 | | Ընթացքի մեջ է |
| 45 | «Լցոն» ՍՊԸ | Տեսչական մարմին | 01.08.2019թ. Թիվ 03/122/2341-19 որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | | 141,912 | Հայցը բավարարվել է, վերաքննիչ բողոք է բերվել, ընթացքի մեջ է |
| 46 | «Թայգեր գրուպ» ՍՊԸ տնօրեն Արմենուհի Գևորգյան | Տեսչական մարմին | 11.04.2019թ.թիվ ԵՏ/14-Ա որոշումը անվավեր ճանաչելու պ/մ | 80,000 | | Հայցը մերժվել է, հայցվորը դիմել է վերաքննիչ, ընթացքի մեջ է |
| 47 | Ա/Ձ Ռոման Շմավոնյան | Տեսչական մարմին | 31.05.2021թ թիվ 04/24-Ա և 29.07.2021թ. Թիվ 46 որոշումները անվավեր ճանաչելու պ/մ | 50,000 | | Ընթացքի մեջ է |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 48 | Վահագն Պայյան | Տեսչական մարմին | 26.03.2021թ.թիվ 08/046/21-ՎՏ որոշումը վերացնելու պ/մ | 150,000 | 250,000 | Հայցը մերժվել է |
| 49 | Ա/Ձ Անդրանիկ Խաչատրյան | Տեսչական մարմին | 01.09.2021թ. Թիվ 04/45-Ա որոշումը անվավեր ճանաչելու պ/մ | 50,000 | | Ընթացքի մեջ է |
| 50 | «Խառնարան» ՍՊԸ տնօրեն Սերգեյ Ավանեսյան | Տեսչական մարմին | 03.08.2021թ. Թիվ 11/24-Ա,11/25-Ա,11/26-Ա, 11/04 որոշումները վերացնելու պ/մ | 250,000 | 314,440 | Ընթացքի մեջ է |
| 51 | «ԼԱՄՕ» ՍՊԸ | Տեսչական մարմին | 22.07.2021 թվականին կազմված «Բնապահպանական և բնօգտագործման վճարի բազայի չափաքանակների» թիվ 68 ակտը վերացնելու պ/մ | | | Ընթացքի մեջ է |
| 52 | Վազգեն Ադամյան | | 22.03.2021 թվականի «Վարչական տուգանք նշանակելու մասին» N07/09-Վ և Տեսչական մարմնի ղեկավարի թիվ 32 որոշումները անվավեր ճանաչելու պահանջի մասին | 80,000 | | Ընթացքի մեջ է |
| 53 | Գրիգոր Ակոպով | | 2021թ-ի հունվարի 29-ի թիվ 08/016/21-ՎՏ որոշումը վերացնելու պահանջի մասին | 100,000 | 90,100 | Հայցը մերժվել է |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 54 | «Կանաչ Սիմֆոնիա» | Տեսչական մարմին | 2021թ-ի օգոստոսի 16-ի թիվ 08/085/21-ՎՏ որոշումը վերացնելու պահանջի մասին | 450,000 | | Ընթացքի մեջ է |
| 55 | «Երևանի կապի միջոցներ» ԳՀԻ ՓԲԸ Միեր Մարկոսյան | Տեսչական մարմին | 17.06.2021 թվականի թիվ ԵՏ/27-Ա որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | 300,000 | | Ընթացքի մեջ է |
| 56 | «Գաջ» ՓԲԸ Արշակ Ենգոյան | Տեսչական մարմին | 02.11.2021թ. թիվ 30-Ա տուգման ակտը, 02.11.2021թ. թիվ 02 ստուգման ակտը, 02.11.2021թ. թիվ 06 ստուգման ակտը վերացնելու և, որպես հետևանք, 02.11.2021թ. թիվ ԵՏ/116-Ա արձանագրությունը, ստուգման ակտին կից կատարված հաշվարկը, ինչպես նաև 11.11.2021թ. վնասի հատուցման պահանջ ներկայացնելու մասին թիվ ԵՏՎ/10-Ա որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | 333,000 | 4,121,940 | Ընթացքի մեջ է |
| 57 | «Աշտարակի Քարհանք» ԲԲԸ | Տեսչական մարմին | 12.10.2021թ. թիվ 04/-12-Ա որոշումը վերացնելու պահանջի մասին | | 219,000 | Ընթացքի մեջ է |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 58 | Զարզանդ Բաբայան | Տեսչական մարմին | 2021թ. օգոստոսի 27-ի՝ վարչական տուգանք նշանակելու մասին թիվ 04/-39-Ա և 2021թ. օգոստոսի 27-ի վնասի հատուցման պահանջ ներկայացնելու մասին թիվ 04/-39-Ա որոշումներն անվավեր ճանաչելու պ/մ | 100,000 | 3,290,000 | Ընթացքի մեջ է |
| 59 | Բյուրական համայնքի ղեկավար Զարզանդ Բաբայան | Տեսչական մարմին | 14.06.2021 թվականի «Վարչական տուգանք նշանակելու մասին» թիվ 04/-27-Ա որոշումն անվավեր ճանաչելու պ/մ | 100,000 | | Ընթացքի մեջ է |
| 60 | Ա/Ձ Հենրիկ Գրիգորյան | Տեսչական մարմին | 2021 թվականի հուլիսի 16-ի թիվ 04/-33-Ա վարչական տուգանք նշանակելու մասին որոշումը վերացնելու պ/մ | 100,000 | | Ընթացքի մեջ է |
| 61 | «Մեծ Մեսրոպ» ՍՊԸ | Տեսչական մարմին | 2021թ. օգոստոսի 18-ին ստուգման թիվ 118 ակտի հիման վրա կազմված՝ 2021թ. օգոստոսի 18-ի հաշվարկում որպես տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման գումար վճարելու պարտականություն «Մեծ Մեսրոպ» ՍՊ ընկերությունը չունի | | 4,352,400 | Ընթացքի մեջ է |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 62 | «Իզոդրոմ» ՍՊԸ | Տեսչական մարմին | 23.08.2021թ. վարչական տուգանք նշանակելու մասին թիվ ԼՏ/101-Ա և պետությանը պատճառված վնասի վերականգնման մասին թիվ ԼՏ/95/01-Ա որոշումներն վերացնելու պ/մ | 300,000 | 22,557,300 | Ընթացքի մեջ է |

**Դատական կարգով պատճառված վնասի բռնագանձման պահանջի վերաբերյալ գործեր**

| h/h | Հայցվոր (Բողոքաբեր) | Պատասխանող | Հայցապահանջի (Հայցի առարկայի) նկարագիր | Շրջակա միջավայրին հասցված վնասի չափը | Կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին | Արսեն Պետրոսյան Ա/Ձ | Արսեն Պետրոսյան Ա/Ձ-ից բնական ռեսուրսներին պատճառված վնասի բռնագանձման պահանջ | 133,582,867 | Հայցը բավարարվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին | Հովնան Ավագյան | Հովնան Ավագյանի կողմից բնությանը պատճառված վնասի գումարը բռնագանձելու պ/մ | 130,500 | Հայցը բավարարվել է |
| 3 | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին | Արմեն Ղազախեցյան | Արմեն Ղազախեցյանի կողմից բնությանը պատճառված վնասի գումարը բռնագանձելու պ/մ | 75,000 | Հայցը բավարարվել է |
| 4 | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին | Արարատ Գալստյան | Արարատ Գալստյանի կողմից բնությանը պատճառված վնասի գումարը բռնագանձելու պ/մ | 90,000 | Հայցը բավարարվել է |
| 5 | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին | Համիկ Պապյան | Համիկ Պապյանի  կողմից բնությանը պատճառված վնասի գումարը բռնագանձելու պ/մ | 33,000 | Ընթացքի մեջ է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6 | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին | Գևորգ Այվազյան | Գևորգ Այվազյանի կողմից բնությանը պատճառված վնասի գումարը բռնագանձելու պ/մ | 37,500 | Ընթացքի մեջ է |
| 7 | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին | Ռոբերտ Ամիրխամյան | Ռոբերտ Ամիրխանյանի կողմից բնությանը պատճառված վնասի գումարը բռնագանձելու պ/մ | 45,000 | Ընթացքի մեջ է |
| 8 | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին | Սասուն Աղաջանյան | Սասուն Աղաջանյանի կողմից բնությանը պատճառված վնասի գումարը բռնագանձելու պ/մ | 51,000 | Ընթացքի մեջ է |
| 9 | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին | Լեոնարդ Կարապետյան | Լեոնարդ Կարապետյան Ա/ձ-ից բնական ռեսուրսներիին պատճառված վնասի պահանջ | 96,415,272 | Հայցը բավարարվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10 | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին | Սարգիս Դավթյան | Սարգիս Դավթյանից տուգանքի գումարը բռնագանձելու պ/մ | | Հայցը բավարարվել է |
| 11 | Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին | Հովիկ Թադևոսյան Ա/Ձ | Հովիկ Թադևոսյան Ա/Ձ-ից բնական ռեսուրսներին պատճառված վնասի պահանջ | 37,464,768 | Հայցը մերժվել է, բերվել է վերաքննիչ բողոք, ընթացքի մեջ է |

*Զենքի բռնագրավման վերաբերյալ դապարան է ներկայացվել թվով 3 հայցադիմում*

1. **Կարեն Խիկարի Խաչատրյան**

   «ATA ARMS» 1 փողանի 12 տրամաչափի 1902803 որսորդական հրացան, սերիա N 19/02803

2. **Արմեն Ֆարամազի Խաչատրյան**

   ՏՕՁ 57-Ս 12 տրամաչափի 84647 որսորդական հրացան

3. **Խորեն Զաքարի Զաքարյան**

   «ՄՌ-27Մ» 12 տրամաչափի 152726595» որսորդական և «ՍԱՅԳԱ ՄԿ» 7,62x39 մմ N H-06182596 որսորդական ակոսավոր հրացաններ